Իրրա Տաֆլյան

ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ Է

ՀԱՅՊԵՏՐԱՏ

ԱՐԻՍ ԵԱՔԼՅԱՆ

ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ Է



ԵՐԵՎԱՆ ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1949

Նապիկը, տիտուլը և փարզացը՝
ճկարիչ Ա. ՉՈՐՊԱՋՅԱՆԻ

АРИС ШАКЛЯН
НАША АРМЕНИЯ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

Հայրենադարձ շոգենավին Բաթումի ժամանումեն իսկ առաջ, Ներկայացի կոմիտեի նախագահին գլխավորությամբ, Երևանեն հոն փութացեր էր շքախումբ մը, որուն մաս կկազմեին ամեն ասպարեզի երկսեռ ներկայացուցիչներ, հայրենական նավահանգստին մեջ ողջունելու համար իրենց նորեկ եղբայրակիցները և օգնելու համար անոնց։

Հայրենադարձներուն համար այս շքախումբին ամենեն հետաքրքրական դեմքն ընկերուհի Մարոն էր։ Երիտասարդ հայուհի մը, սև ու խոսուն աչքերով, թուխի վրա լայնցող դիմագծությամբ, ուրկե անդիմադրելի համակրություն մը կծավալեր իր շուրջը։ Արագաշարժ Մարոն կհասներ ամեն տեղ և հոժարակամ կպատասխաներ ամեն հարցումի՝ Հայաստանի մասին։

Ներկայացի կոմիտեին նախագահը՝ իր անմիջական դրծակիցներով, անդադար կրբոշեր ներկայացիներուն մեկնելիք վայրերը։

Հայրենադարձները անվերջանալի հարցումներով շրջապատած, ողողած էին ընկերուհի Մարոն, որ կգոհացներ անոնց յուրաքանչյուրը՝ անհատ առ անհատ, անոնց մեկնելիք վայրերու մասին տալով լիակատար տեղեկություններ և լուսաբանություններ։

— Բա, դուք ո՞ւր ինկաք...

— Մեր թիվը Հայաստան եկավ...

— Բա, քուրիկ, մերինը Հայաստան չէ. Վեսիի պես բան մըն է։

— Ի՞նչ տեսակ տեղ է եղեր...

— Մաքուր քաղաք է եղեր, առատ պտուղ ունի եղեր...

— Այդ բոլորը ուրկե իմացար...

— Բա, լուր չունի՞ս։ Ընկերուհի Մարոն չե՞ս ճանչնար. Հայաստանեն եկած է։ Հայաստանի ամեն կողմը թիզ-թիզ դիտե և պլպուլի պես կպատասխանե բոլոր հարցումներուդ։

— Ո՞ւր է հիմակ այդ ընկերուհին։

— Նա, զարանթինայի մեկալ կողմը։

Լսողը կվազեր զարանթինայի մեկալ կողմը, ուր ընկերուհի Մարոն շրջապատված էր կիներու, այրերու և երեխաներու բազմությամբ մը, որ հետզհետե կսովորանար, կծավալեր, կծովանար՝ հարցումներու մշտական տեղատարափով մը կոծելով զայն։

Լայնկեկ ափերով և լայնարաց շարժումներով, ակնոցավոր հայրենադարձ մը՝ չհատնող հարցաքննության մը ոսոխնձովը արդեն կպած էր ընկերուհի Մարոյի շրթունքին։

— Սիրելի ընկերուհի,— կշարունակեր ան,— ըսիք թե Լենինական Հայաստանի երկրորդ քաղաքն է։ Հայտարարեցիք թե կլիման ցուրտ է։

Ընկերուհի Մարոն համբերատարությամբ կբացատրե, թե ներդաղթողներուն կարիքները նախատեսված են, թե պետությունը վառելանյութ և վառարան կհայթայթե նորեկներուն, կստեղծե ճմեռը դյուրությամբ անցնելու պայմաններ, կընձեռե ամեն օժանդակություն, որպեսզի Հայաստանի նոր քաղաքացիները հանդիստ ընեն՝ մայրաքաղաքի, քաղաքներու և գյուղերու մեջ։

Անհանդարտ տղա մը՝ խրտչած հոբթի մը նման, մարդկային շղթայեն ներս կիյնա և ամուր բռնելով ընկերուհի Մարոյի ձեռքերեն, կճչէ դրեթէ.

— Ընկերուհի, ո՞ւր է Շնողը, ինչպիսի՞ տեղ է։ Հորաքույրս հոն է։ Մայրս կըսէ, թէ մենք ալ հոն պիտի երթանք։

— Շնող կոլխոզային դյուղ մըն է։ Հոն դուք առատ ցորեն կունենաք և...

— Ես ինչ պիտի ընեմ ցորենը. ան՝ մայրիկիս պետք է։ Ես դպրոց կուզեմ...

— Ո՞վ ըսաւ որ հոն դպրոց չկա։ Մեր բոլոր դյուղերն ալ բարեկարգ դպրոցներ ունին։ Շնողի մեջ երկու դպրոց կա, որովհետև դյուղը երկուքի բաժանված է՝ աշխարհագրական դիրքին բերումով...

— Հա՜, այնպես ըսե...շնորհակալ եմ, ընկերուհի...

Տղան, ինչպես որ եկած էր, այնպես դարձյալ՝ չար հոբթուկի նման, կյատկե, դլխովն ու ձեռքերով կճեղքե բազմության շղթան ու դուրս կելլե, բարձրաձայն ավետելով իր տարեկիցներուն, թէ Շնողի մեջ երկու դպրոց կա...

Պառաւ մը ընկերուհիին ուսերը կծեծե եռանդեն.

— Ըսէ, յավրուս, սա, անուշը մոռցա, սա...ո՞ւր պիտի երթայինք...

Մարոյեն առաջ նոր հարս մը կմիջամտե.

— Մամա՛, երթալիք տեղիդ անունը սորվի, որ հարցնես անոր մասին։

Պառաւը կզայրանա քիչ մը դինք ընդմիջող հարսին, քիչ մը իր հիշողության դեմ ու կլռե։

Բազմության առաջին գծին վրա դանվող բարձրահասակ երիտասարդ մը, որուն աչ հոնքը շարունակ վեր վեր կնեռվեր, կդոռա.

— Փուչ հարցումներով կձանձրացնեք և կհոգնեցնեք ընկերուհիին։ Սանկ, քիչ մը է՛տ քաշվեցեք նայիմ, քիչ մըն ալ մենք հարցնենք։

Առաջ կանգնի, կրաբևե ընկերուհին՝ զդալապես զեղչած ձայնին թոնը և ձախ ձեռքին մեջ պահելով գլխարկին ու ճմռթկելով շարունակ.

— Արա Արամյան՝ երկրաչափ։ Քանի մը բացատրություններ կուտայիք Ալավերդիի մասին, ուր պիտի գրկվինք...

— Ալավերդի, ուր պիտի երթաք, կդանվի Հայաստանի պղնձաձուլագործարանը։ Ճարտարարվեստի բանուկ կենտրոն մըն է և առաջնակարգ կարևորություն ունի մեզի համար։ Հոն ի գործ կդնեք ձեր մասնագիտությունը...

Բաղմութենեն ծերուկ մը՝ իրազեկի լրջությամբ և երկու ձեռքերուն մեջև շիկրատացնելով համբիչին սատափյա հատիկները, կպատասխանե երիտասարդին տեղ.

— Ընկերուհի Մարո, այս երիտասարդը շատ լավ կը ճանչնամ Լիբանանեն։ Սարգիս Արամյանին զավակն է։ Հայրը մեզի համագյուղացի է։ Շատ ընդունակ տղա մըն էր նախակրթարանի դրասեղաններեն իսկ։ Իր ծնողքին աղքատությանը պատճառով, ստիպված էր թե դուրսն աշխատիլ և թե հետևիլ իր ուսման, որուն ծարավն ուներ։ Տնարիներով աքնեցավ այդ կերպով և կրցավ վկայական մը գետեղել ծոցը՝ երկրաչափական վարժարանեն, հաջողությամբ, բայց հազար նեղություններով ավարտելով անոր դասընթացը։ Առաջադիմական գաղափարներ ուներ, ինչ որ հանցանք կհամարվեր հետամնաց այդ երկրին մեջ։ Չէր քաշվեր այդ գաղափարները բարձրաձայն ըսելե։ Առաջադիմական իր գաղափարներով կվարակեր իր շրջապատի ամեն տղի հասակակիցները, զորս կհամոզեր իր շունչին տաքությամբն ու արամաբանության պողպատովը, երբորդ և աննեղելի հանցանք՝ կառավարական շրջանակներու և անանց վարքրոդի գործակալներու աչքին։

Դպրոցն ավարտելե վերջ, իր առաջին մտահոգությունը եղավ գործ մը ճարել՝ իր ճյուղին մեջ։ Բայց աշխատանքի բոլոր դռները փակ գտավ իր առջև, ուր որ գնաց, որու որ դիմեց։ Աբդեն որ գաղութահայ երիտասար-

գին՝ զարթի ընդունակ և հարմար ձեռքերուն բախտն առկե տարբեր էր հոն։ Մենք հոն օտար էինք, եկվոր, հանդուրժված։ Կապիտալիստական խեղդող պայմաններու տակ ճնշված՝ հայ երիտասարդությունը զարթելու, իր ընդունակությունները ի հայտ բերելու իրավունքեն զրկված էր։

Եվ այս երիտասարդը ճաշակեց բոլոր դառնությունները իր բախտակիցներուն։

Մնաց անճար, բայց վառ հույսով իր սովետական երկրի իրականության, ուրկե ծագող, համասփռվող աշխատանքի և ազատության արևը իր շարժումներն ու սիրտը տաքցուցին՝ ամենեն հուսահատական պահերուն անգամ։ Ան արհամարհեց սպառնալիքները, ծեծն ու բանտը՝ իր սովետական հայրենիքի սիրույն, զոր կզտներ արժանի ավելի մեծ զոհողությանց։

Եվ, ահավասիկ, ան այսօր հոս է, իր սովետական սիրապանծ հայրենիքին ազատ հողին վրա, իր իրականացած հույսով ու ամբողջական թափով իր երիտասարդության և կորովին, որոնց առջև լեռները կխոնարհին և տափաստանները ջրարբի մրգատատներու կվերածվին...

— Ընկեր Արամյան, ուրեմն վստահ եղիր,— կըսե ընկերուհի Մարոն՝ սեղմելով երիտասարդին ձեռքը,— Սովետական Հայաստանի, ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, ուր ատալինյան արևը կճառագայթե, դուն և նմաններդ միշտ պիտի գտնեք աշխատանքի ապահովություն և ազատություն, լայն ասպարեզ՝ ստեղծագործումի և շինարարության...

Ծերուկի վկայությունն իր մասին՝ երիտասարդի այտերուն կարմրությունն ավելցուցած է, ավելցնելով համարձակությունն ալ։

— Շատ ուրախ եմ, ընկերուհի. հոս չեկած ես արդեն վստահ էի, թե Սովետական Հայաստանը զոհաբերել գիտ-

ցող երիտասարդության և անսակարկ հայրենասիրության տեղն է։ Շնորհակալ եմ առ այդ ձեր հավատումին համար, որ իմ համոզումիս մեջ կրկնապես կհաստատեք զիս։ Ես պատրաստ եմ իմ սովետական հայրենիքիս շինարարության տրամադրել ուժերս՝ թե՛ իբրև մասնագետ և թե՛ իբրև սոսկական երիտասարդ քսանհինգ դարուններուս դալար ու կենսուրախ հրայրքովը։ Մենք շուտով կմոռնանք մեր անցյալի դառնություններն ու զրկանքները անդորձության և թափառումներուն, արդյունարար աշխատանքի մը հաղթարշավ գնացքին մեջ։ Մենք պիտի միանանք, պիտի շաղախվինք մեր աշխատավոր ընկերներուն հետ, որոնք նոր նվաճումներու էջեր կարձանագրեն՝ փութացնելով առաջադրված ժամանակին առաջ կատարումը ստալինյան հնգամյակին...

Երիտասարդը գլխարկը բարձրացուց օդին մեջ և գոչեց.

— Կեցցե՛ ստալինյան հնգամյակը և անոր հանճարեղ ստեղծիչը...

Ժողովրդին հարդալից լռության վրա տարածվեցավ ոգևորության և խնդության ալիք մը։ Բոլոր գլխարկները բարձրացան և բոլորը միաբերան գոչեցին.

— Ուռա՛, ուռա՛...

Հիմակ երիտասարդին հասակը ընականեն ավելի բարձր կերևեր։ Բազմությունն ավելի կուռեր, ալմեծնար, կծավալեր՝ հասնող նոր այրերով, կիներով և տղաներով։

Ընկերուհի Մարոն մեծապես զոհ եղած ինքնարուխ այս ցույցեն՝ կվոքձեր քալել, բայց ժողովրդին մեջ բռնաձևված նոր հարցումներ՝ Հայաստանի մասին, կարգիլեին անցումը։

— Ընկերուհի,—կձայներ մանկամարդ աղջիկ մը,— Ծաղկաձորի մասին բացատրություն չտված կմեկնիք...

— Ծաղկաձորը Հայաստանի ամառանոցներեն է, կաղդույրի, հանդստի վայր մը՝ բնական սքանչելի տեսարաններով, առողջարար օդով և ջուրով, ուր կերթան մեր բան-

վարներն ու մասավորականները, արհեստավորներն ու արվեստագետները՝ ֆիզիկապես վերանորոգվելու և դարձյալ իրենց աշխատանքին նվիրվելու համար կազդուրված ուժերով։ Հոն կտարվին զպրոցական մանուկներն ալ, մաքուր օդի մեջ, ազատ խաղերով և դասանքի դանազան ձևերով իրենց աշխույժն ավելցնելու։ Գարունեն մինչև աշուն Ծաղկաձոր եռուզեռի, երգի, պարի, շրջագայության և անխառն ուրախության կենտրոն մը, փեթակ մը կդառնա...

— Ծաղկաձորո՜ւմ, Ծաղկաձորո՜ւմ,

Կանաչ անտառն է օրորվում...

Կարտասանե պատանյակ մը՝ բանաստեղծուհիին դովերգը, ընկերուհի Մարոյին որպես արձագանք։

— Հապա Դիլիջանը, ընկերուհի՛...

— Դիլիջանն ալ Հայաստան է, մե՛ր Հայաստանը, ընկերներ... Ձեր երթալիք բոլոր քաղաքներն ու գյուղերը, Երևան, Կիրովական, Լենինական, Գորիս, Կոտայք, Վեռի, Բասարգեչար, Սևան, Իջևան, Նորաշեն, Մեղրաձոր, Դիլիջան, Աշտարակ, Էջմիածին, բոլորը, բոլորը Հայաստան են, Սովետական Հայաստան...

Ծերուկը կմիջամտե իր փորձառության լայնությամբը դծված ձեռքի շարժուձևով մը, որ կկեցնե ընկերուհի Մարոն։ Ձայնն առույգ է և հստակ և խոսքերը՝ ձեռքի համբիչին պես հատիկ հատիկ կարտաբերվին շրթունքներեն անճիգ և մտածումին իմաստությամբը հղկված։

— Ընկերուհի Մարո, մի կարծեք, թե հայրենադարձ այս ժողովուրդը ամառելու կուգա իր սովետական հայրենիքը, որովհետև կմտածեմ, թե ժողովրդին միամիտ հարցուփորձերեն այդ եղրակացության կրնաք հանդիպ և մասամբ՝ իրավունքով։ Բայց սխալ պիտի ըլլար այդ եղրակացությունը, նկատելով, որ անոնք կուգան դանազան տարբեր կլիմաներե և երկիրներե, ուր օդն ու ջուրը և կենցաղակերպի պայմանները Արտասահմանի հայրենադարձ

հայութիւնը առելութիւամբ է լեցված դեպի կապիտալիստական դաժան կարգերը և անոնց ծառա ու գործիք դաշնակ դավաճանութիւնները, որոնք անոր պարտադրած են արհավիրաբեր գոյութիւան մը քաշկռտումը՝ բանտեն աքսոր, աքսորեն ինքնակիզում։ Արտասահմանի հայրենատենչ հայութիւնեն քանի՞ հոգի բաղձաց ու եկավ դաշնակ լուծով հեծող Հայաստանը։ Ո՛չ իսկ մեկ ընտանիք։ Ասիկա պատմական փաստ մըն է, զոր կարելի չէ և պետք չէ բարձի թողի ընել երբեք։ Մինչդեռ այսօր և Հայաստանի սովետականացումեն իվեր, նույն այդ հայութիւնը իր աչքերն ու հույսը դամած կպահե իր հայրենիքը, ուր կվերադառնա հաղարներով, բյուրերով, որովհետև գիտե, համոզված է, թե անիկա մեր Հայաստանն է, այսինքն՝ Սովետական Հայաստանն է։ Արտասահմանի հայութիւնն առինքնված է Հայաստանի առողջ, սովետական հայրենասիրութենեն, որուն սքանչելի ապացույցները ունի ան՝ քաջագործութիւններով հաղթական Սովետական Բանակին ծառայող բաղմաթիվ իր զորավարներուն և զինվորներուն, առինքնված Հայաստանի ստեղծագործ ճիգերեն, որոնց ականատես պիտի ըլլա շուտով և անոնց պիտի խառնե իր բաղուկին ուժն ու թռիչքն իր մտքին և զորովային եղբայրակցութիւնն իր սրտին...

Հավաքական հավատութիւան ձայներ կբարձրանան ներկաներեն։

Մինչդեռ առաջիններուն վրա ավելցող նոր մարդիկ իրենց ջլվիժվող հարցումներով կընկրկին ընկերուհի Մարոյի առջև ու ճամփա կբանան անոր, լռորեն և հավաքաբար համամիտ անոր հայատարարութիւան, ես կմտածեմ յուրովի.

— Արդար և իրավ է Մարոն։

Հայրենադարձներուս մեկնելիք քաղաքներն ու գյուղերը բոլոր՝ Հայաստան են, մեր Սովետական Հայաստանը, զոր կցանկայինք, զոր կերազեինք երեկ, այսօր իրականութիւն է՝ ընծայված մեր խանդավառութիւան, մեր աշ-

խաղանքի նվիրարերման։ Տեղ մը կրնա հողն առատ ու բարերեր ըլլալ, ուրիշ տեղ մը՝ քարուտ։ Տեղ մը ջուրովն է համբավ շահած, չորրորդ մը՝ լեռներով և անտառուտքով։ Մեկը կոլխոզային կենտրոն է, մյուսը՝ սովխոզային կետ։ Տեղ մը խոսը կաճի անասնաբուծության ոլորտը ըլլալու համար, ուրիշ տեղ մը ծաղկաստան է՝ մեղրը առատահոսեցնելու համար։ Բայց բոլորն ալ անվիճելիորեն, անվերաքննելիորեն Հայաստան են, մեր Սովետական Հայաստանը... մեր ստեղծագործ ճիգերուն արդար մրցավայրը։

Երևան, 1947

ԹԵԼՀԱԳԻ ԱՎԱԶՆԵՐԵՆ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԾԱՌԱՍՏԱՆՆԵՐԸ

Շաբթվան մեջ հանդստի միակ օր մը ունիմ — կիրակին։ Մնացած օրերս ծանրաբեռնված են տարապայման դրծերով։

Շաբթվան մեջ ունիմ հաճույքի ժամ մը,—կիրակի կեսօրը, ուր ջղային եմ ամեն բանի դեմ, բացի ումպ մը ախորժաբեր ըմպելիքե և երկու դդալ աղանդերե։

Եվ ճիշտ կիրակի կեսօրին, երբ հագիվ փոխված եմ և կպատրաստվիմ հանդստիս և հաճույքի ըմբոշխնումին՝ դուռը կզարնվի ընդհատաբար և անընդհատ, համառությամբ, մերժելով ամեն բացատրություն՝ անեցիներու կողմեն՝ իմ մասին։

Ոչ ոք սիրտ կընե ափ առնել դուռը սենյակիս, ուրկե այժմ որոշապես կլսեմ տրաբերենով, թյուրքերենով և հայերենով խառնված հառաջասություն մը և վերջնական խնդրանք մը՝ դիս տեսնելու, հիմա տեսնելու, անպայմանն տեսնելու խնդրանք մը։ Տնեցիներու բացատրություններն ու առարկությունները քարի կուղան, կփշրվին։ Ջղերս կբարբսքին, կնեսվիմ դուրս՝ բարկություն թափելու համար ցլխուն այդ հանդուգն, այդ աներես անծանոթին.— ով ալ ըլլա։

Դռան առջև քիթ քթի կուգանք անտպատի տարազով և թափթփվածությամբ երիտասարդի մը հետ։

— Ձով կփնտրես...

— Մեր հայրենակցական միութեան ատենապետը գ�են, ըսելիք ունիմ...

— Ըսելիքդ կրնաս ժամ մը վերջ ըսել...

— Տերզոբի անապատեն կուգամ և ոտիպված եմ ժամ մը Բեյրութ մեկնիլ՝ քու խորհուրդդ առնելե վերջ։

Զղերս կկակղին։ Քու մեկ ժամվան հանդիստդ և նույնիսկ հաճույքդ ինչ կարժեն Տերզոբի անապատներեն մինչև Հալեպ և մինչև Բեյրութ հանձն առնված համփորդության մը քով, բարեկամ, կըսեմ ես ինծի. և՝

— Ներս անցիր, խոսինք...

— Այսահեղ չՔնք կրնար խոսիլ...

— Կրնանք խոսիլ, բայց ներսն ավելի հարմար է։

— Ո՛չ,—կըսե վճռապես։—Հոս խոսինք...

Ու կերկարե թղթիկ մը, շատ պարզ թղթիկ մը, երկուքի ծալված։

— Կարդա՛ սա թուղթը և պատասխան մը տուր։

Ահավասիկ այդ թղթիկն՝ իր ատառասխաններովն ու վերվական վրիպանքովը, իբրև պատմություն վավերական իր ոտյաններովն ու իբրև գրականություն ամբողջական վասոր մը, նյութ՝ ամբողջացվելիք հատորի մը, որուն թատերաբեմը եղավ Տերզոբ՝ իբրև լման և նոր տանջավայր արևմտահայ կոչված միլիոնի մը և անանց հալածական ու տառապած հաջորդներուն։

Այդ գրությունը հոս կարտագրեմ եղածին պես։

Պատվարժան վարչություն։

Զորքմարզպանի Հայրենակցական Միութեան։

Ստորագրեալս Գէորգ Կարօեան ընկերՔ Զորքմարզպանցի Տերզոբի Թելհադ գիւղը ըլլալով, լսեցի զարերով ասպին երապուած հայերու ներգաղթը։ Գանուած գիւղս ինձմե դատ հայ չըլլալուն պատճառով և Յարգելի պատուիրակներուն հոն չգալը դիտնալով, փութացի, կօշկակարութեան մեքենաս ծախել և ճանապարհածախս ընելով, կեդրոն մը

հանրել ընտանեօք, որպեսզի մենք ալ բախտ ունենանք, մեր հայրենիքը վերադառնալ։

Պատվարժան Վարչութիւն, սոյն դիմումնագրով կուզամ ձեզ յայտնաբերել, թէ, ընտանիքս բաղկացած է ինձմէ և կնոջմէս. Թադուհի Կարօեան։

Ես կօշկակարութեամբ և հնագործութեամբ կզբաղիմ, կինս ալ պատրաստ է որեւէ գործ տեսնել Հայրենիքին մէջ, եթէ յարմար տեսնեն։

Ուրեմն կը խնդրէի Յարգելի Վարչութիւնէն, արձանագրէին ինձ ալ իրենց ներգաղթի ցանկին մէջ, որպէսզի ես ալ օր առաջ կարենամ հայրենիքս վերադառնալ։

Մնամ ողնիվ անդամնիդ

Գէորգ Կարօեան

Հալէպ, 4/9/946

— Դուն Կարոյաններեն որուն զաւակն ես... Կարոյանները վերի թաղը կը նստին...

— Գրիգորին զաւակն եմ։

— Կարոյան Գրիգոր անունով մարդ չկար վերի թաղին մէջ։ Ես բոլոր Կարոյանները կճանչնամ։ Հարս մարքուլրը Կարոյան Գեորգենց և երեք եղբայրներուն մայրն էր... Զաւկին մեկը զողերը զարկին։ Անունը Մկրտիչ էր։ Ամբողջ մայրաքաղաքը սգաց անոր մահը, մանաւանդ մայրը, որ մինչև մեռնիլը սգավոր մնաց... Կը հիշես, կրնաս հիշել այս բաները...

— Այո, շատ աղուտ կերպով... Հայրս ալ շատ լսած։ Մեր տունն այդ Մկրտիչենց տան մոտիկն էր...

— Ուրեմն դուն Էնվիր Քիւրքիւրին զաւակն ես։

— Հա, հա, Էնվիր Քիւրքիւրին։ Ճիշտ ես, հարս Էնվիր Քիւրքիւր կըսեին։

(Գրիգորին դյուղացիներենը Գիքոր, Քիւրքիւր, Գոգոս, Գիրգոս էր)։

Ուրեմն սա արարը, որ անա զիմացս կեցեր է, Էնվիր

Գիւրիւրին զաւակն է։ Հիշատակներու ամբողջ աշխարհ մը կիսնդրե, կամրսխե միտքս։

Լաւ կճանչնայի Էնլիզ Գիւրիւրը։ Մեծ մարս քրոջը պարտեզին կից պարտեզ մը ուներ և այդ պարտեզին մէջ՝ քարաշեն տուն մը։ Որբութեամբ մեծցած՝ տուն տեղ էր եղեր, հայր՝ երեք աղջիկներու և մանչու մը, որ այս տարին էր հիմակ։

Է՜հ, ինչ բախտ...

Կարծեք այս անապատային կհասկնա մտածումներս ու իրրև արձագանք անոնց՝ կհարե.

— Է՜հ, ի՞նչ ընենք, մեր բախտն ալ այսպես է եղեր։ Հիմակ ի՞նչ պիտի ընենք...

Շիտիթուն՝ կանդրադառնամ ներկային և անձայն կբխբնդրածեմ ես ինծի։

— Այս աղան, վրանարնակի մը քով իրրև հովիվ աշխատեր է, մեծցեր ու կրթվեր՝ անապատի քերականութեամբ։ Ան չէ մոռցեր սակայն իր հայութիւնը և բախտավոր օր մը, երբ ավազուտքը կարող հայ մեքենավարներեն լմացեր է հուլսի զանեբուն բացվիլը, իջեր է քաղաք և հիմա կգիտե, որ հայրենիք գրկեն գինքն ու իր կնիկը։

— Հայրենիք մը ունիս, զաւակս... Մենք անոր սիրուն կմեռնինք։ Սրտիդ վրա դրե անոր անունը, որ չմոռնաս զայն ընտալ, կյանքիդ ընթացքին։

Այսպես ըսեր էին անոնց մահվան մատներով զոցվող աչքերը։ Այսպես կտակեր էին անոնց մահվան գոգով սրսփացող շրթունքները։

— Հիմակ ի՞նչ կըսեք ինծի, ի՞նչ պիտի ընենք...

— Հայրենիք պիտի երթաս,—կըսեմ վճռակամորեն։

— Հասկե՞ պիտի լմնա գործը, թե՞ պետք է երթամ մինչև Բեյրութ։

— Բեյրութ երթալու պետք չունիս։ Հոս ալ Ներպոլթի կոմիտե կա։ Հոս ալ են Հայաստանի պատվիրակները։ Անոնց կդիմենք, կբացատրենք քու պարագադ, որ բա-

ցառիկ է։ Քու տեղդ հայրենիքն է։— Հոն պիտի երթաս։ Հոն-պիտի երթանք բոլորս ալ, այսօր՝ դուն, վաղը՝ ես ու մենք...

— Իրա՞վ պիտի երթամ...

— Անշուշտ։ Եվ առաջիկա առաջին կարավանով...

— Առաջիկա առաջին կարավանով...

Ուրախության երկու շիթ արցունքով կլեցվին իր կապույտ աչքերը։ Հիմա պայծառորեն կտեսնիմ կապույտ աչքերը Էնվիզ Քիւրքիւրին, որոնք կպճլատան տարօրինակ կենդանությամբ անավասիկ իր դավկին աչքերուն մեջ և ուրախության արցունքը, որ կթրջեն բաց թաղված բոլոր աչքերը տերոբյան մարտիրոսապրության։

— Առաջին կարավանով։ Գնա, պատրաստություններ տես։

Անթեքելի վճռակամությունը դարձյալ շեշտադրված է ձայնիս մեռաղին մեջ այնքան, որ անտարակուսելի ապահովությունը կփոխանցվի, կտարածվի Գևորգ Կարոյանի դեմքին, ջղերուն և բոլոր շարժումներուն վրա։

* * *

Գևորգ Կարոյան մտավ հայրենադարձ կարավանին մեջ և մեկնեցավ իր սովետական հայրենիքը։

Առօրյա զրաղումներս հիշողության տախտակին անդամ մը ալ սրբեցին անցողակի անունն ու դիմագիծը Կարոյան Գևորգին։

* * *

1947-ին ինձի ալ վիճակվեցավ բախտավորությունը՝ դառնալ հայրենիք։

Բաթումիեն Երևան երկաթուղագծին վրա, օգոստոսի երեկո մը կհասնինք Կիրովականի կայարանը, ուր հերվան հայրենադարձներու բազմություն մը և տեղացիները սիրով կդիմավորեն հոբելկներս՝ վագոններու մեջ։

Գիշերվան առաջին ժամերն են և լիալուսինը ցերեկի պես է ըրեր համայնապատկերը քաղաքին և ավելի հեռու-

ներուն, ուր լույսի անհամար կաուցներ կփայլին՝ գետին իջած աստղերու պլպլուքով։

— Բարի եւ եկեր, ընկեր Արամյան,—կձայնե անծանոթ մը՝ ձեռքս հափշտակելով և պինդ պինդ սեղմելով իր ձեռքերուն երկաթյա գելոցին մեջ։

— Բարի տեսանք, ընկե՛ր,— կպատասխանեմ։ - Բայց չկրցա անմիջապես հիշել քեզ, ներողություն...

— Ներված է, ընկե՛ր ջան... ես Էնրիկ Քիւքիւրի որդան եմ։ Հիմակ հիշեցիր...

— Այո, այո... ան, որ անապատեն էր եկեր տարի մը առաջ, Հալեպ...

— Էլի, ճի՛շտ էն տղեն...

Հիմա բոլորովին փոխված է արդեն հերվան անապատաբնակը՝ վրազլուխով և լեղվով։ Վրանաբնակներուն հատուկ էնթարիին և քեֆիէին տեղ հիմա հագած է կանոնավոր հագուստ-կապուստ, գլխուն՝ գլխարկ։ Աչքի եմենին փոխված է կոշիկի և լեղուն՝ անխառն և հաճելի առոգանությամբ հայերենի։ Մորուքն ու լեղն ածիլվեր են։ Մորթին թուխը բացվեր է։ Ճակատին տանջալից կնճիռներուն տեղ պայծառության և ինքնավստահության դրոշմը կփայլի հիմա և կխառնվի աչքերեն ցայտող առուգության։

— Է՞հ, պատմե նայինք ինչպե՞ս ես, ի՞նչ կընես...

— Հիմա սովորում եմ մայրենի լեզուս։ Կինս էլ է սովորում, էլի զբաղվում եմ արհեստով...

— Այսինքն՝ կոշկակարությամբ և հնագործությամբ...

— Կոշկակարությամբ՝ հիմնարկում։ Հնագործությունը, այսինքն հնակարկատությունը ձգել եմ Թելհադ։ Կինս էլ է աշխատում հիմնարկում։

— Այժմ գոհ ես վիճակեդ՞

— Էլի ի՞նչ պիտի ուզենայի, ընկեր ջան։ Նախ՝ որ մեր հայրերեն ժառանգված կարոտով եկել ենք հայրենիք։ Կենդանի աչքերով հիմի տեսնում ենք և վայելում սոցիալիստական ստեղծարար աշխատանքի պտուղը, հայրե-

նիքի բնական գեղեցիկ տեսարանները։ Անապատի ավազներուն վարժված մեր աչքերին համար անսահման հաճույք է դիտել մեր կանաչազարդ սարերը, պտղառատ ծառաստաններն ու հանրային այգիները, ուր առատ բուսականություն է հորդում։ Ամեն տեղ կանաչություն։ Սարերը կանաչով են ծփում, ձորերն առվակներով կարկաչում։ Ջուր մը, ընկե՛ր ջան, կիրովական ունի ջուր մը, որուն կուժը ոսկիով էր գնահատվում արարական անապատում։ Օդը, էլ մի՛ հարցրու։ Հիմակ, օդոստոսի կիսում, տապից այրվելու փոխան, վերմակով ենք դիշերում սենյակում։

Էլի ինչ ասեմ, ինց բացատրեմ, ընկե՛ր ջան։ Անապատում ունեցած մեր վիճակը հայտնի էր։ Պիտի կարկատեիր երկու տրեխ, չորս փոսթալ, կեսը գնում էր պախշիշի, մյուս կեսովը վաղում էիր չոր հացի համեմ և չէիր հասնում։ Էդ դործն էլ եթե էսօր կար, վաղը չկար։ Իսկ այստեղ սովետական հայրենիքում ամեն իրավունքով օժտված, ամենքին հավասար. ունես դործի, կյանքի ապահովություն։ Օրական ութը ժամ աշխատանք, սրմե հետս կրնաս դրսոնուլ այգիներում, կինոներում, կամ կարդալ ընթերցարաններում և դրադարաններում, կամ, եթե ուզենաս, փափագած դրքերդ վերցնել և կարդալ սենյակումդ։ Ես բաժանորդ եմ «Սովետական Հայաստան» օրաթերթին, որ կանոնավորապես ստանում եմ օրը օրին. քիչ շատ կարդում եմ և բան հասկանում։ Եվ ինչ ժամն են հոս թերթերն ու դրքերը, ինչպես բոլոր այն առարկաները, որոնք անհրաժեշտարար պետք են ժողովրդին։ Անապատում ե՞րբ ենք տեսել երեսը հայերեն դրքերու և թերթերու։

Հոն, քաղաքից եկած ամեն համազգեստավորի և անապատից պրծած ամեն ձիավորի դիմաց ստիպված էինք բարև բռնել կենալ։ Հոս ամեն քաղաքացի ազատ է և հավասար՝ օրենքին և օրենքի մարդոց առջև։

Սա մեր սովետական հայրենիքն է, ստեղծարար աշխատանքի և ազատության երկիրը, որուն բարձրացումը մեր բարձրացումն է, որուն բարդավաճումն ու առաջդի-

մությունը՝ մեր արդար հպարտությունը։ Մեր աշխատանքի բաժինը կաթիլ մը քրտինք է մեր եղբայրակիցներու թափած ծով քրտինքին մեջ։

Ափ ի բերան մտիկ կընեի Կարոյանի պարզասիրտ հայտարարությունները, որոնք հայանություններ էին ինծի համար պարզ արհեստավորի մը բերնին մեջ։ Կարոյան կշարունակեր իր խոսքը, իր եռանդովը վարակելով զիս ալ։

— Հապա մի տեսնեիք մեր տիկինն ալ։ Բնավ պիտի չճանաչեիք, այնքան փոխված է հոս։ Հիմակ հայերեն խոսում է և գրում։

Այս պայմանների տակ, ընկե՛ր Ջան, որեէ աշխատավոր հայ, որպիսին ես եմ, միայն գոհ կրնա ըլլալ իր վիճակից և անկեղծ փառաբանանք ունենալ մեզ մեր սովետական հայրենիքը բերող Սովետական Կառավարության և անոր հանճարեղ առաջնորդին։

Լուսնի լույսով կենկատեմ ինքնարավության և երախտագիտության անբացատրելի արտասուքի կայլակները, որոնք կրյուբեղանան Կարոյանի թարթիչներուն վրա։

Կզգամ, որ իմ ալ աչքերս կթրջվին ուրախակից՝ ընկեր Կարոյանի որտաբուխ ուրախության, Թելհադի ավաղներեն Կիրովականի ծառատանները բարեփոխված գտնելով ոչ միայն այս հայրդիին արտաքին հագուստ-կապուտան ու տպրուտը, այլ մանավանդ աղնվացած տեսնելով անոր սիրտը, հայրենասիրական զգացումներն ու դաղափարները՝ սովետական քուրային մեջ։

Երևան, 1947

ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

1.

— Իշթե ասոր խելքս չհասնիր, կնիկ...

— Խելք չհասնելու ինչ կա ասոր մեջ։

— Դպրոցը կոչվի Վարդանյան, մենք կոչվինք Վարդանյան. այս երկու Վարդանյաններուն միջև մանե ակնոցավոր վարժապետ մը և տարին ամբողջ շարունակ դրամ պահանջե մեզմե, այսօր՝ մուտքի տուրք, վաղը՝ կրթաթոշակ, շաբաթ մը վերջ՝ դրչի, դրքի, տետրակի դրամ, չորրորդ ամսուն՝ տոմսակի փոխարժեքը կանխիկ, տրվելիք ներկայացման ի հաշիվ...

— Դպրոցին ազգանունդ կրելը պատճառ մըն է, որ աղջկանդ կրթության համար դրամ չպահանջեն քեզմե։

— Անշուշտ. մենք ու դպրոցը ըլլալով Վարդանյան, հարարորդիներ կհամարվինք։ Ի՞նչ տարակույս, թե այդ դպրոցը իր մականունն առած է հիմնադրե մը, որ Վարդանյան եղած է անպայման։ Հետևաբար ամոթ չէ՞, որ երկու ազգականներու միջև պտիկ հաշիվներու համար ըսի-ըսավ ըլլա։ Ամոթ չէ՞, որ Վարդանյան դպրոց մը իր մականունով աշակերտուհի մը տուն ճամփե դրամի համար...

Տիկին Սաթենիկ կինդար ամուսնին՝ Սարգիս Վարդանյանի տոհմազրական միամիտ այս հետազոտության վրա և ծիծաղելի կգտներ անոր արտահայտությունը։

— Ա՛յ մարդ, քու այս արամաբանությամբդ ոչ ոք պիտի ուզե կրթաթոշակ վճարել իր զավկին համար դպրոցին՝ հետևեն մտեն ազգական ելլելով անոր։ Այն տեսեն ինչ

պիտի բլլա դպրոցի նյութական վիճակը։ Դպրոցի պաշտանութիւնը դրամ պիտի պահանջե, որուն փոխարեն կրթաթոշակ վճարել չուզող հայր մը ապդականներ պիտի գտնե իր դիմացը և պիտի ստիպվի իր դռները դոցել։

— Եթե ճշմարտապես սրտցավ ապդականներ են անոնք, պիտի բանան իրենց քսակները, որ չգոցվին դռները Վարդանյանին։ Անկեղծ ապդականութիւնն այդպես կպահանջե...

— Բանի որ այդպես է, առաջին կարգի վրա դուն՝ իրրև իրավ Վարդանյան մը՝ բաց նայինք քսակդ և վճարե աղջկանդ եռամսյա մասնավճարը, որուն համար երեկ տուն ղրկված էր ան։

— Զունիմ նէ թնչ ընեմ, կնիկ...Ես՝ թեև համեստ բանվոր մը՝ պիտի փափագեի, որ աղջիկս պատիկ չմնար իր դասընկերներուն և գանձիչ-վարժապետին առջև, որ ակնոցը սրբելով ամեն առավոտ կներկայանա դասարան և կակուղ կամ խիստ բառերով թոշակ չվճարող աշակերտները կհրավիրե դուրս՝ զանոնք ղրկելով դասե և դասատիրակութենե ..

— Առանց իր սղելուն, ա՛յ մարդ... Որովհետև ուսուցիչ մը երբեք պիտի չուզեր հակառակն ընել ամեն օր իր կրկնած բարոյական դասերուն և սկզբունքներուն։ Բայց մարդը կտիպվի այդպես վարվիլ իրենց ծնողական պարտականութիւնները մոռցող կամ ատնատակ ընող հայրերու, մայրերու երեսեն...

— Զրսե՞ն, կնիկ, իմ երեսեն...

— Ես այդպես չըսի։

— Բայց այդպես հասկցուցիր։ Եթե ուրիշները չեն պիտեր, Սաթենիկ, դուն՝ գրել կարդալ գիտցող կին, դուն պիտես թե քանի դրուշ օրականով կաշխատիմ և քանի հոգի ապրուստն ու հագուստ-կապուստը կապված է այդ գանցառելի գումարին։ Շահածս ամսական քանի մը դրուշն պիտի վճարենք տանտիրոջ՝ սենյակին վարձքը, խանութպանին՝ առնված պարենին փոխարժեքը, փռատանին՝ հային գինը, փերեզակին՝ թել ու դերձանի համար...

— Գիտեմ, ոչ մարդ, գիտեմ թե օրն իրուն չարաչար կաշխատիս մեր ընտանիքին ապրուստը շահելու համար։ Ես ալ իմ կարգիս կաշխատիմ ասոր անոր լվացքը, կար ու կարկտուքն ու արդուկն ընել, որպեսզի կարենանք ծայրը ծայրին բերել։ Բայց ինչ ընենք, պետք է կարենք մեր ակռաներեն և վճարենք կրթաթոշակը Մարիին, որ ահավասիկ տասներեքին մեջ մտավ և դպրոցը պիտի լրացնե այս տարի։ Հիմակ ալ չոճուխ չէ, արժանապատվությանը չկերցներ դպրոցեն վռնտվիլ թոշակի համար...

— Ըսե՛, ընե՛նք, կնիկ...

— Մաս մը դրամ ճարենք, տանք ձեռքը դանձիչ Պառավյանին և խնդրենք, որ դեղչ մը ընե Մարիին կրթաթոշակեն...

— Տանք, բայց ուրկե՞ և ինչպե՞ս տանք... Հետս՝ չեմ կարծեր, որ այդ մարդը դեղչի մասին ուզե խոսք լսել...

Սարգիս դաղրեցուց ջուրով շփումը վրին և երեսին։ Հիմակ տաշտ մը ջուրը բավական չէր սրբելու մռայլը, որ ճակտեն կիջներ դեմքին և կտարածվեր հոն՝ ականջի ականջ, մթագնելով տեսողությունն ու տրամադրությունը միանգամայն։ Կատակով փոքձել ակսած խոսակցությունը կհանդեր ողբերգական առօրյային, որուն բերած, իրարու բարդած մտահոգությանը, մտալկումներուն տակ Սարգիսին կատարը հիսունեն առաջ ձյունի ճերմակ մըն էր դդեցեր արդեն և դեմքին դաշտը փոթվեր անհամար ակոսներով։ Արևածագին ակսող, արևուն տակ շարունակվող և արևմուտին հետ վերջացող ամենօրյա ու աշխատանքը՝ ուրիշներու դռներուն, երկաթի պես տկուն իր կոզմվածքը փխրուն խմորի էր վերածեր. իսկ բարոյական տառապանքներն արդեն ծյուրեր-լմնցուցեր էին իր կորովը։ Տարիներուն հետ քանի իր ընտանիքին անդամներն ավելցեր էին թվով և ուտող բերաններով, այնքան զոհողություններ էր պարտադրեր ինքն իրեն։ Հրաժարեր էր երիտասարդությանը վարժված քանի մը՝ քսակ նիհարցնող՝ ունակություններեն։ Այս զոհողությունները, ինքնադրկումները

ժամանակավոր, անցողակի դարման մը եղած էին թեթևցնելու իր բեռը, որ ծանրացած էր օր օրի՝ առանց խոսք հասկնալ, մտիկ ընել ուզելու։

Հիմակ հինգ հոգի էին տան մեջ։ Առջինակը Մարին էր, որուն հետևած էին երկու մանչեր, բոլորն ալ մորմեն ժառանգված կապույտ, խոշոր, խելացի աչքերով և աշխատունակությամբ, զոր իրենց հորը կպարտեին առավելապես։ Սարգիս կուզեր իր աչքին լույսին պես պահել մինինիկ այս ձաղուկները. մեծցնել, կրթել, մարդ ընել, հովանուտ ծառեր, որոնց շուքին տակ պիտի հանդչեր ծերության, անկարության օրերուն։ Երեքն ալ կղզիկեր թաղին Վարդանյան՝ վարժարանը։ Կրասերը՝ Մանուկ՝ ձրի կկարդար դպրոցին մեջ ընդունված այն օրենքի հիման վրա, թե միևնույն ընտանիքի երեք զավակներեն երրորդին թոշակ պիտի չպահանջվի։ Գևորգ որդեգիր սանն էր իրենց գյուղին հայրենակցական միությանն։ Իրեն կմնար Մարիին հոգը, որուն հատնելու համար կնեղվեր շարունակ՝ տարվան երեք եղանակներուն։ Սովորական բանվոր մըն էր Սարգիս,—սովորական օրավարձով, որուն վաստակը դժվար կապրեցներ բազմանդամ իր ընտանիքը։ Գոնե Մարին ձեռքը հասնե՞ր...

Պահ մը ճնշող լռություն տիրեց երկու ամուսիններու միջև։ Սաթենիկ կզգար, որ հայրական վիրավորված արժանապատվությունն եղջյուր կցցեր Սարգիսի ներսիդին, բայց՝ ինչ կուզար ձեռքեն։

Երեկ գիշեր, ընթրիքի սեղանին վրա, Մարին արցունքե խոնավցած, կիսատ բառերով համարձակեր էր հորը հասկցնել թոշակի համար տուն ճամփվիլը։

Նախապես նույն պարագան խոստովանած էր արդեն մորը հարդատաս հեծկլտուքով։

Սարգիս՝ անխոս ու խոհուն՝ չոր հացի պատառներուն հետ կուլ էր տվեր զավկին հայտարարությունը՝ վազը դրպրոց չերթալու առանց կրթաթոշակի դումարը դրպանն ու-

նենալու։ Ապշիկն իրավունք ուներ։ Անիրավն ապքաստու-թյունն էր, որ իր շարժումներն էր կաշկանդեր յոթը կուրկապ հանդույցներով և չէր թույլատրեր իրեն լրիվ կատարելու իր հայրական պարտականությունը։

Գիշերն ամբողջ, մինչև լուսաբաց, անկողնին մեջ աջ ու ձախ էր դարձեր, մտածեր, մտմտացեր, որ ելքի ճար մը գտնե։ Որոշեր էր կանուխ երթալ գործի, գիմել վերակաց-վին՝ անկե կանխավճար մը խնդրել իհաշիվ հաջորդ ամ-սականին... Բայց դիտեր դժանությունն այդ անոսպտ մարդուն։ Ի՞նչ ընել...

Սովորականեն կանուխ էր ելեր, երբ անեցիները կը-քնանային դեռ, խոհանոց էր սպրդեր անշշուկ և սկսեր լվացվելու՝ սաղնապակոծ սրտով, ուժգնապես ելլող իջնող մուրճ մը քունքին վրա և արճիճի ծանրոց մը կախված գլուխեն։ Կինը հետևած էր իրեն, խոհանոցի առանձնու-թյան մեջ, միատեղ, միախորհուրդ ճար մը գտնելու հույ-սով։ Կնոջմեն ծածկելու համար ղինք ալեհուզող զգացում-ներու սաստկությունը՝ Սարգիս կատակի էր տվեր։ Բայց կատակն ավելի էր ծանրացուցեր կացությունն ու մթնո-լորտը։

— Քանի որ գալուցին հետ մեր ապրպականությունը բավական չէ գոհացնելու պարոն Պառավյանը, որ քիչ մը հետաձգե Մարիի կրթաթոշակին պահանջումը, դուն ճար մը ըսե, կնիկ, եթե գիտես...

— Ես մտածեցի թե... բայց պիտի թույլատրե՞ս...

Սաթենիկի լեզվին տակ բան մը կար, որ կքաշվեր ըսելու։

— Բայեիրաց ըսե մտածումդ. նայինք ի՞նչ խորհեր ես... Գիտես, որ մերդ՞ավկին կրթության համար պատրաստ եմ ընդունելու կարելի ամեն զոհողություն... կուզես, որ սիգարե՞թը ձգեմ...

— Ո՛չ... մտածեցի թե կարի մեքենան ավանդ դնենք տեղ մը, մաս մը դումար առնենք տոկոսով...

Սաթենիկ կնցավ։ Սարգիսի ճակատին կնճիռները լեռնացեր էին՝ խոժոռության շուքը շեշտելով դեմքին վրա։

— Կարի մեքենան ավանդ ձգելը կամ նուշնիսկ ծախելը՝ դեշ զաղափար չէ։ Բայց ո՞ւր պիտի ընես հատ ու կոտոր կարկատուկները, որոնցմե հատուցթ մը կկաթի մեր դանձանակին մեջ...

— Երեկ, Մարին դպրոցեն գալեն վերջ, ես գացի խոսեցա տիկնանց միության դանձապետուհիին, որ հեռվեն մոտեն ծանոթ է մեր վիճակին...

— Էհ, ինչ ըսավ...

— Գանձապետուհին հաժար է կարի մեքենան մեր առնը ձգել առայժմ, պայմանով, որ առառավելն մինչև երկու ամիս վճարվի փոխ առնված գումարը։

— Ըրե՛ ինչպես որ հարմար տեսեր ես։ Կաշխատինք մեր խոստումը կատարել, քաշելով մեր ապրուստին երկայնքեն լայնքեն, կտրելով մեր կոկորդեն։

— Այն ալ պիտի ըսեի, թե լավ կըլլար մեյ մը երթայիր Պառավյանին՝ գեղչի համար։

— Իմ գործի գացած տաեսնս Պառավյանն անկողինը կըլլա...

— Ուրեմն Մարին հետ ես դպրոց կերթամ և կխընդրեմ որ...

Սարգիս ճնացյալը չլսեց։ Առավ քալեց, մտավ սենյակ ահնդագին շարժումներով հագվեցավ։

Շրթունքին սեղմված սիգարեթն առատ ծուխ կարձակեր, երբ գործի ճամփան բռնեց։

* * *

Մարին, անկողնին մեջ սուտ քուն եղած՝ ծայրեծայր լսած էր հորը մորը խոսակցությունը՝ խոհանոցին մեջ, իր մասին և մրմնջած էր յուրովի։

— Օր մը անպայման պիտի հատուցանեմ ձեր զոհողությունը...

Եվ կուլ էր տված մինչև կոկորդը եկած ալիքը հեծկլլանքին։

2.

Հայրենադարձ, հայրենադարձ...

Սովետական Հայաստան իր տարակա զավակները կը-հրավիրեր իր ծոցը։ Ամեն հայու սիրտ տենդագին կարո-վեր՝ ժամ առաջ հասնելու իր ցանկալի հայրենիքը։

Հայաստանյան թերթերն ու գրքերը ձեռք ձեռք կանցնեին, հայաստանյան ռադիոն կլսվեր ամեն տունե։ Հայաստանյան լուրեր շրջան կընեին բերնե բերան։ Ամեն շրթունք կերգեր հայաստանյան երգեր։ Ամեն ոք կհպարտանար Հայաստանի գինվորներով, զորավարներով և անոնց քաջագործություններով։ Ամեն հայ, ամեն գործ ձգած՝ կվազեր արձանագրության գրասենյակները արձանագրվելու և արձանագրվողներով հրճվելու համար։

Հայրենադարձ, հայրենադարձ...

Ցանկալի ավետիսը կլսդանջեր, կարձագանքեր ականջե ականջ և սիրտե ի սիրտ։

... Մարի Վարդանյան այդ ամառ զովասանքով շրջանավարտ եղավ Վարդանյան վարժարանեն։

Տարեվերջի հանդես մը սարքվեցավ Հալեպի հանրածանոթ մի սինեմայի սրահին մեջ, երգերու, արտասանության, պարերու հայաստանյան հայտագրով մը։ Մարի Վարդանյան արտասանեց Ռոբյանի՝ այն ատեն արտասահմանի մեջ մեծ ժողովրդականություն շահած մեկ բանաստեղծությունը, հաղարներու սրտընդոստ ծափահարությանց մեջ։

Այս առավոտ երկինքն հայոց
ես տոնական շքեղ տեսա...

* * *

Սերունդներ սերունդներով պիտի պատմվի և երբեք պիտի չմոռցվի այն փառահեղ ու սրտագին ընդունելու-

թյունը, զոր ցույց տվին Սովետական Հայաստանի կառավարությունն ու ժողովուրդը՝ իրենց օտարերկրյա, հայրենադարձ եղբայրակիցներուն և քույրերուն հանդեպ, Բաթումիեն մինչև Երևան և մինչև հեռակա գյուղերն ու անկյունները։

Հայրենադարձ նավը Բաթումիի մեջ դիմավորվեցավ ծաղիկ փունջերով, երգերով, նվագներով և ջերմագին գրկախառնումներով։ Հայրենադարձ շոգեկառքը՝ ծաղիկներով և կանաչներով զարդարված՝ եղբայրական Վրաստանի հողին վրա նույնպես արժանացավ գուրգուրոտ վերաբերումի։

Մարի Վարդանյան ամեն տեղ, ուր ընդունելություն մը կսարքվեր ի պատիվ հայրենադարձներուն, կարտասաներ Հայաստանի բանաստեղծներեն կտորներ՝ խլելով անվերջ ծափեր։

Սարգիսին ու Սաթենիկին զոհունակության չափ ու սահման չկար։ Գիշերն սկսող ուրախությունները կշարունակվեին ցերեկն ալ՝ առանց դադարի։ Ցերեկի պարերն ու երգերը կվոխանցվեին գիշերվան՝ առանց ընդմիջումի։

Այսպես անցավ երաշանուշ շաբաթ մը մինչև Երևան, ուր հայրենադարձները զետեղվեցան իրենց հատկացված բնակարաններուն մեջ, վայելելով ամեն դյուրություն։

Վարդանյան ընտանիքին տրվեցավ հարկաբաժին մը Ստալինյան պողոտայի վեցերորդ շենքին մեջ զույգ սենյակներով, խոհանոցով, էլեկտրականությամբ ու հարակից տարքավորումով, զոր երբեք երազած ըլլար Սարգիս։

Երկու շաբաթվան կազդուրի և ծանոթացման ժամանակաշրջան մը տրվեցավ՝ մինչև գործի սկսելնին։

Սարգիս օրը քանի մը անգամ կելլեր դուրս, կդիտեր շուրջը, կծանոթանար շուրջիններուն, կերկարեր մինչև մոտակա այգիները, ուր կհանդիպեր և կզրուցեր հայրենադարձ ծանոթներու և երևանցիներու հետ։ Իր հայրենը հաճախ չէր զորեր լման բացատրելու իր միտքը տեղացիներուն, այն ատեն կդիմեր ձեռքի ոտքի շարժումներու՝ անոնց հասկցնելու համար այնտեղի իր կյանքը

և այսուհետև իր կյանքը։ Կրսեր թե ասոր համար երախտապարտ է Սովետական Միությանն մեծ առաջնորդին և ուսուցչին, և պլխարկը հարգանքով կհաներ։

3.

Օդոստոսի վերջերն էր։

Սարգիս օր մըն ալ այդի եկավ սովորականեն ավելի ժպտուն, ավելի լավ տրամադրված։

— Այսօր ձեզի բռնաֆ դեպք մը պիտի պատմեմ,— ըսավ շուրջիններուն՝ դեռեղվելով նստարանին վրա։

— Ի՞նչ է դեպքը և որո՞ւն պատահած է,— ըսին չորս կողմեն հետաքրքրությամբ։

— Մեզի պատահեցավ։ Դիտեք որ ամեն օր այցելուներ կունենանք, կուգան բժիշկներ, որ մեր առողջությանը հոգ տանին, ընկերուհիներ, որոնք մեզի կօժանդակեն մեր գժվարությանց մեջ, ուրիշներ, որոնք մեզ թատրոն, սինեմա կառաջնորդեն։ Երեկ մեզի եկան երկու ընկերուհիներ և ըսին, թե մոտակա գպրոցին ուսուցչուհիներեն էին։ Հայտնեցին, թե սեպտեմբեր մեկին բոլոր դպրոցները կվերաբացվին միևնույն ժամուն, միևնույն ծրագրով։ Աբձանագրեցին մեր զավակներեն պատիկները՝ իրենց դպրոցին համար և հանձնարարեցին, որ սեպտեմբեր մեկին, երկուշաբթի առավոտուն պատիկները անպայման գրկենք դպրոց։ Մարիին վկայականը տեսնելե վերջ ըսին, թե ինստիտուտ պետք է արձանագրվի։

Համաձայնեցանք, բայց կես բերնով խոստովանեցանք, թե տակավին գործի չէինք սկսած և թե մուտքի տուրքի և գրենական պիտույքներու համար անհրաժեշտ դումար չունեինք։

— Դրամի կարիք չկա։ Երկուշաբթի առավոտ պատիկ-

ներն անպայման գրկեցնք դպրոց՝ սրձանագրվելու և դասի սկսելու համար։

Հետաքրքրվեցանք, թե այս առանձնաշնորհումը մեզի՝ նորեկներուս համար էր միայն, թե տեղացիներու զավակներն ալ ձրի կկարդային։ Զարմացան։

— Ամեն քաղաքացի հավասար է օրենքին առջև։ Տեղացիներն էլ Սովետական Հայաստանի քաղաքացիներ են՝ ձեզի պես։ Նրանց զավակներն էլ կարիք ունեն ուսումի, որ պարտադիր է մինչև տասնհինգ տարեկանները։

Զարմանալու կարգը մերն էր։ Արտասահմանի մեջ լսած էինք պարտադիր ձրի ուսման մասին՝ թեկուզ երգի մեջ։

Բայց ավելի ապշեցուցիչ անակնկալը կար տակավին։ Ո՛չ միայն դպրոցականները—նախակրթարանեն հետո—ձրի ուսում կստանային, զերծ էին որևէ տուրքե, այլ առաջադեմ—որոնց կերազանցիկ կըսեն—աշակերտները կվճարվեին ամսե ամիս՝ պետության կողմե։ Եվ ասիկա մինչև համալսարանները, ուր երիտասարդներ ու տարիքոտներ նույնիսկ կուտանին և ամսական ոռճիկ կստանան պետությենեն։

Երբ ուսուցչուհիները մեկնեցան, աչք աչքի ծնացինք կնոջս հետ, լռելյայն իրարու հասկցնելով, թե սովետական հայրենիքի մեծ բարիքներեն է ձրի ուսումը և թե երկու օր հետո մեր զավակները տուն պիտի չճամփվին դրամական պահանջով, Կտիշեինք անցյալը՝ – կարծեք դար մը առաջ ըլլար—իր դառնություններով, օտար երկրի մը մեջ և աչքի առջև կրերեինք նոր՝ մեր սեփական հայրենիքին մեջ ու կփոքձեինք զուգադրել այդ երկուքը՝ անցյալն ու նորը։

Ու այս ամենը երազ կթվեին մեզի։

Մարիին ձայնն էր, որ մեզ սթափեցուց.

— Հայրիկ, զավակներուդ ուսման համար մ՛ պետք չունիս ծխախոտեդ հրաժարելու։ Մայրիկ, մ՛ պետք չունիս

կարի մեքենան ոտանդ ձգելու տիկնանց միությունները մոտ՝ զավակիդ կրթաթոշակը ապահովելու համար։ Ձեր Մարին կրթաթոշակի համար գալոսկեն վճռելու վախն ու մղձավանջը չունի հիմա։ Մի կարծեք, թե քաղցրիկ երազ մըն է սա։ Չէ՛, ինչ որ կլսեք, ի՛նչ որ կտեսնեք, իրականություն է, սովետական իրականություն...

Երևան, 1947

ԿԺՊՏԻՆ ՎԱՀԱՆԻԿԻ ԱՅՏԵՐՆ ՈՒ ՓՈՂԿԱՊԸ

1.

Գրեթե տենդահույզ՝ Վահանիկ կբռներ հայրիկին ձեռքը, որ հերյունին և կաշին միջև կոշկոռ էր կապեր, կսեղմեր ուժով և ուշադրությունը տեղափոխվող պայուսակներուն ու կողովներուն կենտրոնացուցած հոբը դեմքին կնետեր իր պարբերական հարցումը, Բաթումիի մեջ, հայրենադարձ շոգենավեն իջնելու պահուն, կամրջակին վրա.

— Կաղանդ պապան Ը՞րբ պիտի գա, հայրի՛կ...

— Կաղանդ պապա՞ն... Հիմա ժամանակն է այդ հարցումին, տղա՛. հելե՛ մեյ մը շոգենավեն իջնենք։

— Հապա՞ կըսեիր թե կաղանդ պապան պիտի գա, երբ Հայաստան հասնինք... Ահավասիկ Հայաստան հասանք։

— Տակավին շոգենավին վրա ենք, զավակս։ Ձեռքս ամուր բռնե՛, որ չսահիս, չիյնաս։ Նայե՛, ահա սանդուղն ենք, սանդուղեն պիտի անցնինք հիմա։

Վահանիկ դժգոհ՝ կձգեր հոբը ձեռքը, որ զրաղած էր արդեն կանթովը խոշոր, լեցուն կողովի մը։ Կոշկակարին մյուս ձեռքն ալ զրավված էր ծանր պայուսակներով։

— Ձեռքս մի՛ ձգեր, Վահանիկ...

— Եթե չըսես, քեզի հետ չեմ երթար, ես Հայաստան կերթամ նավով։

Ոտքը դետին. կզարներ, դետին գամվելով ինքն ալ եղած տեղը։

Հայրը ճարահատ՝ անկարող պատիժով կամ ծեծով ոգեշնչելու աղուն, մարդոց այդ խուճապային իրարանցումին, հրմշտուքին և դիտաւ պատւոյ ոտքոց աճապարանքին մէջ, անկարող ոգեւորելու զայն շաքարի, շաքարեղենի խոստումով, կորուկ կերպով գոհացում կուտար անոր հարցումին։

— Կաղանդ պապան պիտի գա չորս ամիս վերջ, լաւ մտիկդ պահե։

Երեխա մը և պայուսակ մը շալկած կնոջ մը Վահանիկի մայրն ալ, որ նկատելով զաւկին կախերես կեցուածքը՝ կրսեր ամուսնին.

— Ի՞նչ կա, Արամ, ինչո՞ւ կեցեր ես։

— Վահանիկ կաղանդ պապան կհարցնե, ԷՐ պիտի գա, կըսե կկենա։

— Հիմա քալե, Վահանի՛կ, կաղանդ պապան Հայաստանի մէջ պիտի գա։ Իրմէ անմիջապես առաջ ձյունը ճերմակ գորգեր պիտի փռե իր ոտքերուն տակ։ Անոնց վրայեն հանդարտորեն քալելով պիտի գա կաղանդ պապան, որ ծեր ըլլալուն չկրնար ամեն փոս ու բարձրություն ոտքով անցնիր։ Երբ Հայաստան հասնինք, որ հասկե հեռու չէ ալ, և երբ ձյունը գա, այն ատեն պիտի գա կաղանդ պապան։

— Այո՛, հայրիկ։

— Այո, մեծ այո, տղա։ Հիմա քալե նայինք։

Վահանիկի դեմքին դիծերը մեղմացան։ Խոհուն՝ ոտիկ ոտիկ մոտեցավ հորը, բռնեց անոր ձեռքը, որ բեռնավորված էր արդեն կանթովը ծանրատար կողովի մը։

Շոգենավեն իջնելու պահուն, ոտնդուղին ճիշտ մէջտեղը, Արամ զգաց, որ Վահանիկին կակուղ թաթիկը իր ձեռքը կձգեր հանկարծ։ Վատնդավոր տեղ էր։ Կեցավ, առանց ձայն հանելու, իրեն հետ կեցնելով իրեն հետևող հայրենադարձները։ Ամենքը մի՛ նեռեց Վահանիկին։ Տեսավ, որ անոր երկու ձեռքերուն ալ չորսական մատները գոցված էին։

— Ի՞նչ կա, Վահանի՛կ։

— Հայրիկ, մինչև կաղանդ պապային դալը չորս ամիս կա, չէ՞։

Վահանիկ դոցված մատները կցուցներ։

— Ճիշտ է, Վահանիկ։ Հիմա բռնե ձեռքս, որ քայենք։

Իր հաշիվին ճշտութենեն զոհ՝ Վահանիկ դարձյալ բռնեց հայրիկին կոշտացած ձեռքը։

2.

Ա՜հ, սա մեծերու պատճառաբանությունը...

...Կաղանդի այդ գիշերը երբեք չէր կրնար մոռնալ Վահանիկ։ Իր արժանապատվությունը խորապես վիրավորվեր էր այդ գիշեր։

Ավետիս Տյուրկերյան Վահանիկի դասընկերներեն էր։ Իր դասարանին ամենեն հեռադեմ աշակերտը հավանաբար։ Բայց ամենեն մաքուր և նոր զգեստներ կհագներ շաբաթնակ, որոնք կփոխվեին եղանակին համաձայն։ Հարուստի զավակ էր։ Ի՞նչ փուչ հանդամանք, որ կթույլատրեր Ավետիսին դուռդանալու, սոնքալու իր դասընկերներուն քով, իր դասընկերներուն վրա, բարձրեն նայելով անոնց իր տափատին և փողկապին արդուկովը, մաքրափայլությամբն իր շապիկներուն, որոնց սպիտակը թեև չդիմանար մինչև երեկո՝ անոր փնթիության պատճառով, թեև դասերու միջոցին շաբաթնակ կմկմար, կարմրեր, պապանձեր, աչքերովը օգնություն աղերսեր Վահանիկեն։

Իր դասերը պատրաստելու համար, Ավետիսը կապավիներ Վահանիկի օժանդակության, համարյա դաստիարակչության, դպրոցին մեջ և դուրսը։ Նույն թաղը կբնակեին Գրիգորյանները՝ նկուղի մը մեջ, Տյուրկերյանները՝ բարձրադիր տան մը երկրորդ հարկին վրա, զրեթե ճիշտ դիմացը կոշկակարին ստորերկրյա սենյակին, որ ամեռը ցուրտ էր և ամառն արևի լույսեն զրկված էր։

Վահանիկ շատ հետաքրքիր էր Ավետիսենց հարկաբաժինը տեսնելու, բայց այդ մասին խոսք բանալ հպարտությանը չէր կերցներ. իսկ Ավետիս անտարբեր էր, հեռավոր ակնարկություն մըն անգամ չէր ըներ իր դասընկերը հրավիրելու, տանելու իրենց տունը։ Ծնողքները խստիվ պատվիրած էին, որ աղքատի զավակներ չբերեր տունը՝ որևէ պատրվակով, ով ալ ըլլար, որովհետև կընային գետնի գորգերն աղտոտել, բարձիկներուն ծալքերն ավրել։

* * *

...Տարի մը առաջ էր։ Նոր տարին կմոտենար։ Դպրոցին մեջ ամբողջ աշակերտությունը տարված էր երաշխավը լուսավառ տոնածառերու, զույնզգույն և զարմանազան նվերներու և հանդեսներու, որոնք պիտի սարքվեին դպրոցական և ընտանեկան հարկերու տակ՝ նոր տարվան առիթով։

Ավետիս մասնավոր հովով մը կխոսեր իրենց տան մեջ պատրաստվող մեծաշուք հանդեսի մասին։ Կաղանդն ու իր ծննդյան տարեդարձը կզուգադիպեին և այդ առթիվ իրեն տրվելիք նվերներուն մանրամասն ցուցակը դոց կարտասաներ՝ լորձունքն առատացնելով իր ունկնդիր դասակիցներու բերաններուն մեջ։

Վահանիկ թուքերը կուլ կուտար՝ տպավինած անօգուտ պաշտպանությանն իր հպարտության, բայց հարուստի տան մեջ նոր ու հեքիաթային բաներ տեսնելու հետաքրքրությունը, ցանկասիրությունը խտիզ կընեին լեզվին տակ տեղ մը, որ քերվելով կըլլար խոսք և սկսամառանց դիտնալու, թե ինչպես, կարտասանվեր։

— Ավետի՛ս, դիս ալ չե՞ս տանիր անվանդ տոնախմբությանս...

Ավետիս կմտմտար, կդժգոհեր, բայց մտքին առջև բերելով Վահանիկին օժանդակությունները իրեն՝ իր դա-

ները պատրաստելու համար, կես բերան խոստում կուտար Վահանիկը տանել իրենց տունը՝ տոնախմբության դիշերը։

Բացառապես իրեն ընծայված այս պատվին համար՝ Վահանիկ ուրախության գագաթնակետը կելներ պահ մը, ինքնագոհ, լուրջ ու վերացած։

Երեկոյան Վահանիկ օրվան այս «դեպքը» կավետեր հայրիկին և պահանջ կդներ, որ տարեգլխուն իրեն ձեռք մը նոր զգեստ ճարվի՝ փողկապով ու փայլուն կոշիկներով ամբողջացած։

— Անոնք հարուստ են, զավակս,— կաղերսեր հայրը՝ պահ մը անդոհանքի մատնված՝ տղուն անակնկալ պահանջին առջև,— անոնք ունին, կրնան շինել, բայց մենք...

— Բայց մենք ինչ...

— Մենք աղքատ ենք, զավակս։ Եկուր, վաղ անցիր սա հագուստի պահանջին։ Քեզի աղվոր, փայլուն կոշիկ մը կկարեմ, չբլլար...

— Ոչ, ես նոր հագուստ և փողկապ կուզեմ,— ձայնը կձգեր Վահանիկ իր կոկորդին ամբողջ ուժովը։

Խոհանոցեն վրա կհասներ մայրը, կմիջամտեր.

— Ա՜յ մարդ, հելպեթ բան մը կընենք։ Տղան հրավիրված է Տյուրկերենց տունը։ Այս հագուստներով չկրնար ներկայանալ յա...

Զավկին լացակամած պահանջին և կնկան անոր իրավունք տվող արտահայտության միջև սեղմված, կծկված՝ կոշկակար Արամ տեղի կուտար, կխոստանար անպայմանորեն զգեստ մը դնել Վահանիկին՝ կաղանդի դիշերը, անկարելի խնայողություններ ի գործ դնելով ընտանիքին ակռաներուն վրա։

— Մենք աղքատ ենք... Աղքատը մարդ չէ՞... Ա՜հ, սա մեծերու պատճառաբանությունը,— կմտածեր Վահանիկ։

* * *

Մինչև կաղանդին օրը Վահանիկ ալ խոսք չբացավ Ավետիսին՝ իր հրավերի մասին։ Բայց արդեն պատրաստ-

ված էր նոր զգեստներով և նոր կոշիկներով և սրտաբուխ կոպասեր երեկոյանալուն, որ Ավետիսենց երթա։

Երջանկաբեր պահը հասավ վերջապես։ Վահանիկ առաք փառաք հագված շքված գնաց իր դասընկերոջ տունը, որուն մուտքի դռնեն կսկսեր լույսերու փառազարդությունը՝ ակնախտիղ շողարձակումով։ Սեմին վրա Վահանիկ պահ մը վարանեցավ և ապա՝ ամբողջ քաջությունը գինակոչելով՝ դռան զանգակը հնչեցուց։ Դուռը բացող ոգաուհին վերեն վար չափեց զինք՝ իր նոր զգեստներուն մեջ և քթի հատկանշական ծռմռտուքով մը թույլատրեց, որ ներս անցնի, որմե նեղվածության քրտինք մը հոսիլ առավ Վահանիկի կոնակեն։

Նոր այցելուներ հասան, մտան բակը և ուղղվեցան դեպի դահլիճը։ Վահանիկ խառնվեցավ խումբին, մտավ ներս։

Ամեն կողմ կանաչ, ամեն կողմ լույս ու ծաղկեփունջեր։

Ընդարձակ, զորղապատիվ դահլիճին մեջտեղը շտկված էր կաղանդի սեղանը, որուն պատվո բազկաթոռին վրա՝ հայրիկեն և մայրիկեն շրջապատված՝ նստած էր Ավետիս՝ փառավորությամբ ուռած անուններով և ճառաղայթող դեմքով։

Ի միջի այլոց, Վահանիկ ևս իր կարդին ձեռքի սիրալիր սեղմումով շնորհավորեց իր դասընկերը և անոր ծնողքը, որոնք զարմացական ակնարկներով ընդունեցին իր ներկայությունն ու շնորհավորությունը։

Հյուրերը հետզհետե լեցուցին դահլիճը՝ պատշաճ ընդունելության, պարագային հարմար ժպիտներու փոխանակումներով և խնդակցության արժանահարդ արտահայտություններով, որոնց օտար և խորթ մնաց Վահանիկ՝ մեկուսանալով հեռին անկյուն մը այդ եռուզեռին, եռանդագին շարժումներուն, անաղմուկ երթուղարձերուն միջև։

Ուրախություններն սկսան։

Հատուկ նվագախումբ մը, այդ դիշերվան համար

հատկապես վարձված՝ պարի և երգի ուրախ եղանակներ կենչեցներ։ Կերուխումին չափ չկար սեղանին վրա։ Վահանիկ սրտի անօրինակ սեղմումով աչքի առջև կբերեր իրենց աղքատիկ սեղանը և առատությունն ու շռայլությունն այս սեղանին, ուր բրդացած կերակուրները, համապահներն ու միրգերը լման եղանակ մը կբավեին իրենց։ Այս ինչ շռայլություն՝ թաղին մեջ իրենց կծծիությամբը համբավված Տյուրկերյաններուն համար, որոնց գռնեն կվռնավեին ամենեն վավերական աղքատներն անգամ։

Զանազան խմիչքներու և անուշահոտությանց հոծությունը ծանրաբեռնված մթնոլորտը քիչ առ քիչ կսեղմեր Վահանիկի կոկորդը և դահլիճը բռնող ծերծերումներեն, մտերմասացություններեն, պռոստարանություններեն և բաժակաճառներեն իր օտարությունը՝ հոնկի փախելու փափագ մը կծնցներ իր ներսիդին, որ բոպե առ բոպե կաճեր, կծավալվեր, կալեկոծեր ընդերքին մեջ՝ անկարելի համեմատություններով։

Եղավ պահ մը, երբ տանտերը կանչելով սեղանին վրա սպասավորող աղջիկներեն մին, հանքովը գինք մատանուշեց՝ բաներ մը փսփսալով ականջին։ Ա՛լ տարակույս չըկար։ Ինք օտար և ավելորդ էր այդ դահլիճին, այդ հրավիրյալ, «ընտրանի» ընկերության մեջ։ Սպասուհին մինչև իր կողմն ուղղվիլը՝ կամացուկ մը դուրս սպրդեցավ Վահանիկ՝ քնատ մարդու տրամադրությամբ։ Սպասուհին բակին մեջ հասավ իրեն՝ իր երեսին քսված նեղկերսուն խոժոռությամբն ու մուրքի գուռը մատնացուցելով մըրմըռաց, կարծես ինքն իրեն հետ խոսելով։

— Ի՞նչ աներես լակոտներ են... Ինչպես ալ ներս կըմտնեն չե՛ս գիտեր...

Դուրսի ցուրտը Վահանիկի ճակտին դպավ՝ մտրակի հարվածին պես, վանեց թմրածությունը մարմնին և ուղեղին մանավանդ։ Մուրքն ասեղնեց մտերը։ Քալեց դեպի իրենց տունն ոճապարանքով։

Եվ երբ դրտասարսուռ նկուղին մեջ, իր մահճակալին վրա հոգնած երկնցավ, կես մութին մեջ, արցունքն հոսիլ սկսավ աչքերեն, անձայն, առատությամբ։

— Մենք աղքատ ենք... անոնք հարուստ...— Ա՜հ, սա մեծերու պատճառանությունը. որքան կճնշեր հիմա իր կուրծքը անավոր ստուգությունն այդ պատճառանության...

* * *

— Զավակս, Սովետական Հայաստանի մեջ հարուստ աղքատ չկա։ Հոն բոլորը հավասար են։ Բախտավոր օր մը, երբ հոն ըլլանք, պիտի տեսնես թե կաղանդը տարբեր պիտի ըլլա այստեղի կաղանդներեն։ Երանի՜ թե շուտ հասներ այդ օրը,— կըսեր հայրը Վահանիկին հետևյալ առավոտուն, լսելի վերջ իր զավակին սրտառուչ ու ցավագին խոստովանությունը՝ Տյուրկերյաններու տան մեջ կրած արժանապատվության վիրավորանքին մասին։

3.

Կոչկակար Արամ Գրիգորյան իր չորս շունչե բաղկացած ընտանիքով Բաթումիեն դրկվեցավ Երևան և տեղավորվեցավ իրեն հատկացված կոկիկ սենյակի մը մեջ։ Հագիվ իր գործերը կարգի դրած՝ ուսումնական տարին սկսավ։ Վահանիկը դրավ իրենց տան մոտիկ դպրոցին մեջ, որ Դերենիկ Դեմիրճյանի անունով կկոչվեր։

Վահանիկ, ընկալուչ ու բաց միտք տակավին, դպրոցին մեջ շուտով ընտելացավ արևելահայերենին։ Կիսուեր առանց մտիկ տալու սխալին, ուղիղին։ Ճռվողուն ծիտիկ՝ ամեն երեկո կարճուկ հեքիաթ մը կպատմեր հայրիկին, փոխարենն ստանալով կոնֆետներ, զոր կբաժներ միամյա քրոջը՝ Սրբուհիին հետ։

Ամպոտ գիշերներուն Վահանիկ քնքշությամբ կբռներ մայրիկին ձեռքը, կքաշեր դուրս և մատնացուցելով երկինքը, կհարցներ։

— Մամա, նայիր, սա ամպո՞ւմն է ձյունը։

—Չէ՛, զավակս, ասիկա անձրևի ամպ է,— կըսեր մայրը։

— Հապա ո՞ր ամպը պիտի բերի ձյունը, որի վրայից քալելով պիտի դա ձմեռ պապիկը... Կաղանդ պապային անունը հոս ձմեռ պապիկ է, մամա, սովորիր և էլ ուրիշ անգամ կաղանդ պապա մի՛ ասի։ Ե՞րբ պիտի դա ձմեռ պապիկը։

Տիկին Վարսենիկ կժպտեր պստիկին՝ կակուղ բառերով կշանար իր գիտցածեն բան մը հասկցնել անոր։

Վահանիկ իբրև հույսի շյուղի մը՝ կդիմեր հայրիկին.

— Հայրի՛կ, քանի՞ ամսից պիտի դա ձմեռ պապիկը...

— Հա՜ հա՜, շատը գնաց, քիչը մնաց, զավակս. մի քանի ամսից...

4.

Դեկտեմբերի մեջ ավելի տենդագին օրեր անցուց Վահանիկ։ Գրեթե ամեն գիշեր ամպ կար երկինքը։ Անձրև կուգար, փողոցները տեղ տեղ վերածելով ջրակույտերու, ուր անշուշտ թե—կիսորհեր պստիկը—խրած պիտի մնային ձմեռ պապիկին ոտքերը։ Ինչպե՞ս պիտի դար խեղճ ծերուկը՝ իր կողովովը, որ լեցված պիտի ըլլար անհամար պըստիկներու բերված, անհամար նվերներով։

Ձի՛շտ է. անցյալ տարի Հալեպ եկեր էր կաղանդ պապան դողդոջելով, տքալով, հևալով, հազիվ դիմանալով իր բեռի ծանրության և ճամփու տաժանքին։ Անկե ի վեր խեղճ ծերունին ավելի ծերացած ըլլալու էր։ Ինչպե՞ս պիտի կրնար քալել այս անձրևին տակ։ Բայց Հալեպ եկող ծերուկը կաղանդ պապա կկոչվեր, արդյոք ձմեռ պապիկն ալ նո՞ւյն ծերունին էր, թե՞ ավելի երիտասարդ մեկը, որ կարենար ձյուներու վրայեն քալել օրերով։

Վահանիկ կմտմտար, կմտմտար ու նորեն կդիմեր հորը.

— Հայրիկ, ուր մնաց ձմեռ պապիկը։

— Դեկտեմբերի վերջն ենք արդեն, տղաս, ուր որ է շուտով կուգա ձյունը և ձյունին վրայեն քալելով կուգա կաղանդ պապան։

— Եթե ձյուն չգա...

— Եթե ձյուն չգա, դարձյալ կուգա, մի մտահոգվիր, Վահանիկ։

Այդ օր ամպերը, որոնք երկինքը գոցեր էին հորիզոնե հորիզոն, տարբեր գույն մը ունեին, հանգարտ, ողորկ, միաղանգված։ Հետինքին, կարճատև ցուրտի մը հաջորդեցին առատ փաթիլները ձյունին։ Ճերմակ, ճերմակ։ Ճերմակով մը, որ բոլորովին տարբեր էր մինչև հիմա իր տեսած և ճանչցած ճերմակներեն.— ոչ ջուրի ճերմակին, ոչ կաթի ճերմակին, ոչ ալ քաթանի ճերմակին կնմանեին այս հորձանուտ, դալար դալար իջնող փաթիլները։

Վահանիկին պահ մը այնպես թվեցավ, թե երկնքի առաստաղը փլած էր և հոն դամված ասաղերը փշուր, փշուր կիյնային, կմաղվեին վար։

— Վահանիկ, նայե, ահավասիկ ձյունը եկավ, վաղը կաղանդ պապան ալ, ուր որ է, կուգա, անպայման կուգա...

— Ձյունը սա թափվող փայլուն թիփե՞րն են, մայրիկ...

— Այո, ասոնք են, զավակս...

Վահանիկ դուրս վազեց, ափերը լայն բացած տեղացող փաթիլներուն, որոնք փափկորեն ու անշշուկ կիյնային և անմիջապես հետո կչքանային։

— Մայրի՛կ, այս ձյունները կհալին, կկորսվին. ինչպե՞ս պիտի դիզվին և ձմեռ պապիկի ճանապարհին գորգ պիտի ըլլան։

— Քիչ մը համբերող եղիր, զավակս։ Հիմա նեղս եկուր։ Ձյունին չես վարժված՝ կմսիս։

— Բայց ցուրտ չկա, մայրիկ. ցուրտը փախած է ձյունին առջևեն և պահվտած է չես գիտեր թե ուր։

5.

Հետևյալ առավոտուն կանուխ արթնցեր է Վահանիկ և ապակիներուն ետևեն կդիտե դուրսը, որ վերեն ի վար, երկայնքին լայնքին ձյունով ծածկված՝ կփայլիր։ Ճամփան սպիտակ հարթություն մըն է, բոլոր փոսերն ու ցեխերն անհետացած են ձյունին տակ։ Զարմանքեն պիտի այլայլի։

—Ի՞նչ ապվոր բան է եղեր ձյունը,—կխոսի ինքն իրեն։ —Եթե ձմեռ պապիկը եկել է Երևան, անպայման հաճելի ճանապարհորդություն է ունեցել այս ձյունին վրա։

— Վահանի՛կ,—կձայնե հայրը,—ձմեռ պապիկը քաղաքս եկեր է արդեն և քեզի հրավիրագիր քարտ է ուղարկեր, որ այսօր ժամը տասնմեկին երթաս Պետրկես՝ նվերներդ ստանալու իր ձեռքեն։

Վահանիկ աչքերը լայն լայն կբանա։

— Ի՞նչ...

— Ձմեռ պապիկը հեռավոր հյուսիսեն եկեր հասեր է Երևան։ Ահա հրավիրագիրդ։

Վահանիկ ոստումով մը կհասնի իրեն ղրկված հրավիրագրին և դրեթե կհափշտակե զայն՝ հորը ձեռքեն.

— Ո՞ւր պիտի երթամ դինք տեսնելու, հայրիկ։

— Պետրկես։

— Ո՞ւր է Պետրկեսը։

— Միասին պիտի երթանք, տղա։ Հիմա պատրաստվե, ժամը տասնին տունեն կելլենք, որ տասնմեկին հասնինք Պետրկես։

Վահանիկ ճապարանքի մեջ է. ոտքերուն տակ ձյունները անուշ անուշ կիշրատան խնդությամբ, կփսրատան կարծեք։ Տղուն այնպես կուգա, որ քաղաքին ամեն կողմերեն արև է ծագեր։

Ապդարար փողը ժամը ութը չզարկած՝ Վահանիկ ար-

դեն լվացված է, հագված շքված՝ կապասե հոբը, որուն կոշկու կապած ձեռքը բռնելը մեծագույն հաճույքը պիտի ըլլա այսօր իրեն համար։ Հագված է անցյալ տարի իրեն համար հայրիկի առած համազգեստը, որ քիչ մը նեղ կուգա հիմակ իրեն։ Կարմիր, փողփողուն փողկապը իր այտերու փայլուն խնձորներուն հետ ներդաշնակություն կպահե։ Կժպտին Վահանիկի այտերն ու փողկապը։

— Հայրիկ, ես պատրաստ եմ...

— Հա, հիմա, տղաս, հիմակ ես ալ կըլլամ պատրաստ։ Մինչև իմ պատրաստվիլս թեյ մը խմե դուն։

— Թե՞յ... լավ, կխմեմ։

Դրեթե տենդահույզ՝ Վահանիկի շարժումները կըսեն, թե անոր սիրտն ուրախ է, որ ելեր նստեր է դեմքին և ճակատին առատ խոպոպներու վրա։

Ա՜խ, մեյ մը ափը դներ հայրիկին ձեռքին մեջ։ Այնուհետև դյուրին էր պապիկը տեսնել, խոսիլ հետը, իր ձեռքեն առնել նվերը, զոր ան կբերեր իրեն և իրեն տարեկից հաղարավորներու՝ հեռավոր հյուսիսեն։

6.

— Բայց, հայրիկ, մեր Սովետական Հայաստանի ձմեռ պապիկը ծեր չէր, թեև մազերն ու միրուքը սպիտակացել էին։ Այտերը կարմիր կարմիր վառվում էին և ձայնը զորավոր էր, ինչպես լինում են ձայները երիտասարդներին։ Ծունկերը չէին դողդողում՝ հակառակ ցուրտին։ Հալեպի կաղանդ պապան կարծես ջերմից էր տառապում, էնքան դողում էին անդամները։ Հոգնություն կաթիլ մը քրտինք ու նշան չկար դեմքին վրա մեր ձմեռ պապիկին։ Շարժումներն ալ առույգ էին՝ հակառակ այնքան ճամփա քալելուն։ Բայց, հը՞ը՞, հայրիկ, հասկացա, հասկացա, ձյունի դորգերուն վրա քալելը մարդը չի հոգնեցնում։

— Ձյուններու վրա քալելեն չի հոգնիր Հայաստանի ձմեռ պապիկը, տղա։

— Մեր Սովետական Հայաստանի ձմեռ պապիկը իմ բոլոր ուղածները էլ բերել է։ Հա՛, հայրիկ, իմացա՞ր, որ ձմեռ պապիկը ինձի պես է խոսում հայերենը, ոչ թե քեզի և մայրիկին պես։

— Այդ միևնույն լեզուն է, քիչ տարբերությամբ կխոսինք ես ու մայրիկը, դուն ու ձմեռ պապիկը։ Մենք ալ շուտով կհարթենք դժվարությունները, կվարժվինք, կխոսինք Սովետական Հայաստանի պետական լեզուն, ամենուն հետ, ամենուն պես։ Ձմեռ պապիկը քեզի բերած է բոլոր ուղած բաներդ։ Նայե՛, քեզի բերած է չամիչ և քաղցրեղենիք, որ քիմքդ անուշցնես։ Քեզի բերած է մատիտ, գրիչ, թանաք ու թուղթ, որ գրես, կարդաս։ Օրերդ դիտնալու, ամսաթիվերդ չմոռնալու համար բերած է օրացույց մը լուսանկարով սովետական աշխարհի մեծ առաջնորդ և հայ ժողովրդին մեծադույն բարեկամ ընկեր Ստալինի, որ քեզ ներշնչե, ոգեշնչե քու քայլերուդ մեջ, կյանքի պայքարի ընթացքին՝ դեպի հաղթանակ և դեպի լուսավոր ապագա։ Ամեն օր թերթ մը պիտի պակես այդ օրացույցեն։ Այդ թերթերուն լմնցած օրը, օրը ցուրտ ըլլա, թե մեղմ, անձրև ըլլա, թե ձյուն, ձմեռ պապիկը դարձյալ պիտի դա՝ անպայման ու անվրեպ քեզի և քեզի պես հազարավորներու, միլիոնավորներու համար, որոնք ալ պատանի դարձած՝ հոտակորեն պիտի հասկնան ու ըմբռնեն կյանքին իմաստը արժեվորող բաները և պիտի սպասեն կաղանդի տարբեր նվերներու։ Կաղանդի նվերը իրենք իրենց ձեռքովը պիտի պատրաստեն, իրենց ստեղծագործ ու բեղմնավոր աշխատանքեն, որ Սովետական Հայաստանն ու աշխարհաշող Սովետական Միությունը դարձուցած է ուժի և կամքի, պայքարի և խաղաղության, եղբայրության և առաջդիմության մեծադույն օրսրանը, ուր արևներն ամեն ծագե կշողան և անմարելի լույս կհամասփռեն...

Վահանիկ աշխատելով ըմբռնել հոբը ըսածները կմրմնջար՝ աջ ձեռքովը ղրկած ձմեռ պապիկին բերած նվերները և ձախ թաթիկովը ամուր փարած հայրիկին ձեռքին,

որ հերյունին և կաշիին միջև կոշտացած էր։ Աշխուժով կշաղնաբ հետևիլ անոր մեծկակ քայլերուն։

Անոնց ոտքերուն տակ ձյունը կճշտար խլրտուն ու խայտուն և կփսրտար կարծեք, տալով պատգամը վարդակարմիր գալիքին, որ հայրենադարձ և սովետական քաղաքացի հայրիկինն էր այսօր, հայաստանցի և սովետական քաղաքացի զավկինը պիտի ըլլար վաղը։

Կարմրաշառայլ այդ գալիքին հանդեպ և անոր սևեռարիր՝ կժպտին Վահանիկի այտերն ու կարմիր, փոդփոդուն փոդկապը։

Երևան, 1948

ՀԱՅՐԵՆԱՏԵՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

1.

Գիտեք Բեյրութի տաքը։ Մանավանդ օգոստոսի տաքը՝ արևի մատովը թափված վավերական կրակ, որ կիսաշի ու քրտինքով կլվա մարդը մարդուն։

Այնպես տաք էր օգոստոս տասնևմեկի երկուշաբթին Բեյրութի քաղաքին վրա, ուր խռնված, ամբոխված ժողովուրդը երկու բյուրը կանցներ ապահովարար։

Հայրենադարձ նավը՝ երկու օրև ի վեր քաղաքը խարսխած էր արդեն, ընդունելով անձայրափակ բեռները բախտավորներուն, որոնց կարավանները արևածագին հետ հասել առած էին դեպի ծովափը, ընտանիք առ ընտանիք, դասակ առ դասակ՝ մտնելով սովետական աղաոտածուփ դրոշին տակ, անվերջ ծափահարությանց և կեցցեներու աղաղակներով ողողված։

Այնպես տաք էին օդն ու սրտերը հայ մարդոց, այն օրը։

Եվ համապարփակ ուրախություն էր . . . Ուրախությունն արցունք էր աչքերու մեջ լճացած և թարթիչներեն կախված՝ սպիտակ խաղողի հատիկներուն պես կամ այտերն ի վար գլորվող ալունք ալունք։ Ուրախությունն անիսու ժպիտ էր բիբերու խորը։ Ուրախությունը խոսք էր, որ կոստոստեր շուրթե ի շուրթ և կվազեր խումբե ի խումբ։ Ուրախությունը շարժում էր ձեռքերով, ոտքերով, գլուխներով և դրոշված թաշկինակներով։ Ուրախությունը համայնական և խորունկ վիլտուք մըն էր, որ օդը կրոներ,

որ սրտերը կթռցներ՝ աղափնյակներու համակ սպիտակ երամի մը պես։

Զուներ անոթության և ծարավի զգայությունն այդ ժողովուրդը, որ ավտոներու աղմկոցին հետ քաշվեր, քարափ էր եկեր, հատ հատ, զույգ զույգ, խումբ խումբ. սովարացեր, լայնցեր ու փռվեր էր ամեն տեղ, ուր կարելի էր ոտք մը տեղ ճարել։ Ու այնպես, շունչը բռներ կկենար, կսպասեր նավի մեկնումի ժամուն, արևին տակ, որուն մաղեն կրակը կթափեր, կհեղեղվեր, խաշելով և քրտինքով լվալով մորթերը մարդոց։

Ծովափ ելած և ծովուն վրա բարձրացած ծով մըն էր խայտաբղետ ու խայտաղին ժողովուրդը, որուն հայրենասիրությունը վեր էր տաքին կրակեն, ջուրին պաղեն և անոթության խոցոտանքեն։

Հայ ժողովրդին ընդհանրական այդ ներկայությունը հոն, անդրժելի և հանդիսավոր ուխտն էր անոր, հանդեպ իր մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին և մայր Մխիթյան՝ Սովետական Ռուսաստանին։

2.

Արևմուտին հետ հայրենադարձ նավն ինքն իր վրա շարժեցավ՝ քաշելով իր խարիսխը ջուրերեն. դղրդաց և բաժնվեցավ քարափեն։

Օհո՜, տեսնելու բան էր մեր ժողովրդին կոհակումը, ժամքը՝ նավին և ծովափին վրա միանգամայն։ Ամեն գլուխ առաջ էր երկարեր՝ ամենքը տեսնելու համար։ Եվ վոխադարձաբար։ Ամենքը հրաժեշտ կուտային և հրաժեշտ կառնեին։

Նավին և ծովափին երկու կտորի բաժնված ամբողջությունը մաղնիսացած իրարու էր հառեր սեռեռաբիր, մինչ բարձրախոսեն կթնդար հայրենական երգը.

Ջան Ստալին, ջան Ստալին,
Պողպատի նման Ստալին . . .

Փոխադարձ հազար ողջույն, բյուր մաղթանքներ՝ հայրենաբաղձ ու հայրենասեր բյուր բերաններե, որոտագին, իլացուցիչ խժլտուքով դեմ կրոներ հայրենական երգին։

Օհո՜, կարժեր տեսնել մեր ժողովուրդը՝ խանդավառության, խնդաղեղումի դերաղանց այդ վայրկյանին և սիրտդ ամուր սեղմել, որ հանկարծ չպատռե կուրծքիդ վանդակը՝ երջանկութենեն և հպարտանքեն։

— Բարև տար ջան Երևանին . . .

— Ողջունե՛ Լենինականը . . .

— Հերմինեն գրկե՛ իմ տեղս . . .

— Համբույրնե՛ր հայրենի հողին . . .

— Հայաստանի սահմանը որ ոտք կոխես՝ համբուրե՛ քարերը . . .

— Ողջունե՛ ընկեր Լենինի արձանը։

— Իմ տեղս Սասունցի Դավիթ պապիրոս մը ծխե ...

— Երևանի դեղձերը վայելե՛ . . .

— Ըսե՛ մեր Նուպարին, որ իր նամակին և պատիկներու լուսանկարներուն կսպասենք . . .

— Ծրարը չմոռնաս Զարուհիին հանձնելու, ուր որ է գտիր, կենդանի աչքերով տե՛ս զինքը և ողջագուրե . . .

— Արարատի օդիով և իշխանի մեղեով քեզի մը ըրեք և զիս ալ հիշեցե՛ք . . .

— Մեր վիճակը հասկցուցե՛ք ընկեր Պապյանին . . .

— Մեղի ալ տարոս մաղթե՛, մենք ալ բախտավորվինք . . .

— Ընկեր Գրիգոր Հարությունյանին ձեռքերը սեղմե՛։

— Ընկեր Միկոյանը որ Երևան գա, ըսեք իրեն, որ տակավին հոս կմնան շատեր՝ հայրենասիրության կրակը իրենց կուրծքին տակ . . . Այս բաները թող պատմե մեյ մը հայր Ստալինին . . .

Մինչ նավին բարձրախոսը կհնչեցնե հայրենական երգը.—

Ջան Ստալին, ջան Ստալին,
Պոդպատի նման Ստալին . . .

Ու տակավին կերկարի շարանը հաղար դույնով և տասը հաղար տեսակ, մեծ ու պոտիկ հանձնարարություններու ծրարված, հասցեագրված՝ մեքենագողներուն մեկնողներուն։

Մեկնողներու բազմությունը կամրջակն ամբողջ բռնած է։ Կլորակ լուսամուտները լեցված են գլուխներով։

Աչքերս անկրկնելի ու անպատում երջանկության արցունքներով մշուշված՝ կդիտեմ քարափի բազմությունը, որ գրեթե կշոշափե նավին համբարար ճոճվող ու հեռացող կողերը։

— Չե՞ս տեսներ, Հալեպի մեր պատվիրակներն են, քեզ կողջունեն,—կմշտե ձեռք մը կողես։

— Կնիկ, գլխարկս տուր, որ՝ իբրև սովետական նոր քաղաքացի՝ ողջունեմ մեր պատվիրակները . . .

Ցցիկես գլխարկը կուգա ձեռքս։ Աջ ձեռքովս (ձախ ուսոսկրս կոտրած էր Հալեպեն մեկնումի վերջին ժամու դժբախտ արկածի մը հետևանքով և ամուր կապված կուրծքիս վրա) գլխարկը կհանեմ լուսամուտեն և հրաժեշտ կառնեմ մեր Հայաստանի պատվիրակներեն՝ քսան տարիներու վրա ետ դարձած երիտասարդական խանդավառությամբ և ավյունով։

Անհուն ու տակավին վերջանալ չունեցող այս շարժումին և դառուգդոչին միջև նավուն պարանը կշարժի և անկե վեր շուլլվող գլուխ մը և ապա ճկուն մարմին մը կդծագրվի լուսամուտիս առջև, անակնկալելի պարզությամբ և սենեմաթիք բեմադրությամբ կարծեք, կարծեք էքրանի վրա։

— Նե՛ս տառեք, նե՛ս տառեք հերոս տղան — կճվան մեկ բերան՝ մեքենագողները քարափեն։

Ու ակնթարթի մը մեջ, տակավին մեր ընելիքը որոշելու ժամանակ չունեցած՝ ներս կիյնա երիտասարդ մը և նույն դյուրաշարժությամբ կխառնվի մեկնողներուն և ակնթարթե մը կլուծվի անոնց հետ, կկորսվի անոնց մեջ։

— Ո՞ւր գնաց այդ երիտասարդը . . .

— Հիմակ հոս էր . . .

Կարծեք չքացավ երիտասարդը՝ իր կուրծքը վառող հայրենասիրության կրակեն։ Կարծեք մեր տեսածը աչքի դդայախաբություն մըն էր միայն։

Արդեն այնպես տաք էր օդը, այն օրը։ Եվ շոգենավին մթնոլորտը հայրենատենչությամբ վառված։

Եվ նավը գրկաչափով մը կհեռանար ծովափեն՝ ծանրատար ծրարներովը ծովահարության և կեցցեներու։

3.

Շոգենավին մեջ հայրենադարձները տասնական ընտանիքներով դասակներու բաժնված էին։ Յուրաքանչյուր դասակ ուներ իր տասնապետը, որ պատասխանատու էր իր դասակին համար կարավանապետին և այս վերջինն՝ իր կարգին՝ նավապետին։ Շոգենավին մթնոլորտը եռուզեռող, եռանդով ու խորունկ վժվուքով կենդանացնող, ցուցակագրված, անցագրված բախտավորներուն թիվը 4320 էր, որոնց ստվար մասը, եթե Այնճարեն էր իջեր, մնացյալ մասը դատորոշելու համար պետք էր տարածվիլ Գամբշլի քրդախոսներեն մինչև Սուրի հայախոսները, Արամոյի արաբախոսներեն մինչև Թրիփոլիի, Հալեպի և Բեյրութի թյուրքախոսները։

Ամեն մարդ կկարծեր դիտնալ, թե վերջնեկ երիտասարդը Բեյրութեն փախստական մըն էր, որ արկածախնդիր մը կրնար ըլլալ, բայց գրեթե ոչ ոք կճանչնար զինք՝ անունով աղգանունով։

Դժվար էր զիրար ճանչնալ, այսուհանդերձ կասկածոտ փսփսուքներն ու նշանացի ցուցումները, իրրև վերջնեկի՝ կկենտրոնանային երիտասարդի մը վրա, որ հայրենադարձներու ծառայողներուն միջև միշտ առաջնակարգ դիրքերու վրա էր՝ ամեն օժանդակություն և ծառայություն տրամադրելով կարիքավորներուն։

4.

Երրորդ օրվան մութին պարապրկումին հետ մեր ետև թողուցինք թյուրքական ջուրերը՝ Սև ծովուն մեջ։

Նավը կլողար հանդարտ ու անվրդով՝ Սև ծովուն թխաթույր, հեղուկ տարածության վրայեն մինչև կես դիշեր, երբ հանկարծահաս տեղատարափ անձրև մը նավին պաշտպանված մասերը հրեց բացօթյա ճամփորդները։

Քանի մը ընտանիքներ ձեռքի իրենց բեռներով տեղավորվեցան սրահին մեջ, որուն վրա կբացվեր մեր խցիկի դուռն ալ։ Ուրիշներ լեցուցին նրբանցքները։

Գլխեն մինչև ոտքերը թրջված երիտասարդ մը առանց ծածկույթի կկված էր — ըսին ինծի — մեր դռան առջև՝ անհրավեր և անպաշտոն պահակի մը պես։ Օգնած էր օգնության կարոտ ընտանիքներու և քաշված էր հոն՝ տեղը չկրավելու համար բաղմանդամ ընտանիքներու, որոնք այլապես կընային նեղվիլ։

Ապա կիսատ բառերով և բացատրություններով ինծի հասկացուցին, թե այդ երիտասարդը նավը շարժելե հետո հասնող երիտասարդն ըլլալու էր։

Փափկանկատությամբ ներս հրավիրեցինք զինք, տաք թեյ մը և պաքսիմատներ հրամցուցինք, որ նախ ներսեն տաքնա քիչ մը։ Թեյին ամենեն հետաքրքրական մեկ բոլեին, աջ արմուկիս հենած՝ հարց տվի մեկեն, շեշտով մը և փաղաքշությամբ մը, որ միայն հայրական կրնար համարվիլ։

— Նավը շարժելու պահուն, պարանին շուլլվելով ներս մտնող երիտասարդն ես, ընկե՛ր . . .

— Այո՛, ճիշտ ու ճիշտ այդ երիտասարդը.—ըսավ վճռականությամբ մը, ուր կարելի չէր սքողել ներկայությունը խորապես իրական թախիծի մը, որ կլճանա մարդուս ներսիդին հաճախ և հանկարծական հպումով մը կժայթքի, կշաբվանի անակնկալորեն։

— Քիչ մը հուզված եմ,—ավելցուց՝ շարունակելով ումպ ումպ, համբորեն խմել թեյը։—Թրջված եմ, բայց երբեք չեմ մրսում։ Հուզումս կուգա քաղաքեն, զոր երեկոյան անցանք՝ երկուքի բաժնելով ծովեն։

— Պոլսեցի՞ եք։

— Պոլսեցի եմ, այո։ Ծննդավայրս այն քաղաքն է, ուր մարդոց ամենեն թունավորներն են ծվարած և կծվատեն կուրծքը իմ և քու պատկանած ազգին։ Հիմա մայրս հոն է։

— Բայց ձեր անունը չըսիք դեռ, ընկե՛ր . . .

— Ներողություն . . . Քիչ մը հուզումը շատ բան մոռցնել տվավ ինծի։ Կկոչվիմ Դավիթ Դարբինյան. շըրջանավարտ՝ Դալաթիս Կենտրոնական վարժարանեն. . . Եվ ձեռքը մեկնեց։ Մտերմորեն և ջերմագին սեղմեցի ինծի երկարած ձեռքը՝ փոխադարձաբար ներկայացնելով ինքզինքս.

— Արշակ Մարգարյան, նախկին լրագրող . . .

— Ուրախ եմ, որ գիտակից մեկու մը հանդիպեցա այս պահուն։ Դուք կրնաք հասկանալ գիս, որովհետև նավուն մեջ ընդհանրապես այն սխալ կարծիքը տարածված է իմ մասին, թե նավուն ուշ հասած ըլլալով, կրնամ փյուրյուզ մը ունենալ։

— Ես այդպես չեմ կարծեր, որովհետև համոզված եմ, թե ավելորդ ու ապորինի մարդ մը չէ, ճանճ մըն անդամ չկրնար մտնել բախտավոր այս բազմության մեջ, որ դեպի իր սովետական հայրենիքը կնավարկե . . .

— Համաձայն եմ ձեզի, ընկե՛ր Մարգարյան . . . իմ պարագաս հետևյալն է։— Կտեսնեք թե երիտասարդ եմ։ Ավելցնեմ, թե ամեն ատեն ուրիշներուն ծառայելու պատրաստ երիտասարդ մըն եմ։ Իրրև այդպիսին՝ երկու օրե ի վեր կաշխատեի հայրենադարձներուն բեռները շողենավ փոխադրող հանձնախումբին մեջ։ Այս առավոտ իմացա, թե ներգաղթող ընտանիքի մը, որուն զույգերը շողենավ դըրված էին, կրտսեր զավակը մեջտեղ չկար։ Հորը, մորը և ազգականներուն կողմե կատարված փնտրտուքներն անօգուտ անցած էին՝ գտնելու իրենց զավակը։

— Հետաքրքրական դեպք մըն է։ Գտնվեցավ այդ տղան։

— Այո՛, գտնվեցավ։ Լսեցեք թե ինչպե՛ս։ Անմիջապես

գործս ձգեցի և, հոբը կասկածներուն յուցմունքովը, դիմեցի օտար ընկերության մը դպրոցը, ուր կուսանները այդ տղան։ Դպրոցին տնօրենը, որ կրոնավոր մը էր, առանց մտքին մտքուքին ամչնալու, հայտարարեց, թե տղան հոն չէր և թե մենք իրավունք չունեինք մտնել դպրոցին ներս։

— Հասկցա, խոսքդ Ֆրանսացի կրոնավորներու վարժարանին մասին է, ուր չեն կրնար մտնել նույնիսկ տեղական ոստիկանները։

— Այս իրողության առջև դիմեցինք լիբանանյան ոստիկանության, ուր աշխատող ճարպիկ դաղտնի ոստիկան մը կար։ Մեր համոզված պնդումներուն վրա, թե կորսված տղան այդ հաստատության մեջ պահված է, դաղտնի ոստիկանը ձեռք առավ փնտրտուքի գործը։ Խոսքը չերկարեմ, հաղավ կրոնավորի հագուստ, իբրև իրենցմե մեկը, մտավ այդ վարժարանը, ուր գտավ տղան կրոնավորի հագուստով։ Մինչև որ կարելի եղավ տղան ազատել այդ սև ագռավներու ճանկերեն՝ ժամանակն անցավ։ Տղան հոբը հանձնվեցավ։ Ես ալ աճապարեցի շոգենավ, երբ այս վերջինը քարափեն բաժնվելու վրա էր։ Կամուրջը քաշած էին։ Ինծի կմնար կամ մնալ հոն՝ հաջորդ կարավանին սպասել, և կամ փաթթվիլ պարանին և մտնել շոգենավ։ Շուրջինները,— որոնց միջև կոմիտեի անդամներ և պատվիրակը— խրախուսեցին, որ փորձեմ այդ կերպով մտնել։ Ինչպես տեսաք, փորձս հաջողեցավ և մտա . . .

— Շոգենավին մեջ կանոնավորեցիք ձեր կացությունը։

— Անշուշտ՝ առանց հապաղելու։ Արձանագրված էի Հալեպեն եկող Մինասյան ընտանիքին վրա։ Ըստ այնմ ալ կշարունակիմ արձանագրված մնալ։ Ահավասիկ քարտս։

— Ե՞րբ եկած էիք Հալեպ։

—Ինն ամիս առաջ՝ Պոլսեն փախչելով։ Ըսի թե մայրս Պոլիս է դեռ։ Իբրև լրագրող խմացած եք ունևորության տուրքի մասին։ Այդ տուրքին անունով մեր ընտանիքը ծախվեցավ կառավարության կողմե՝ արժեկնով մը, որ հարմես պահանջված տուրքին մեկ չորրորդը հաղիվ

կրցավ դոցել։ Մնացյալ երեք քառորդին համար հայրս տարին հեռավոր, անանվանելի լեռ մը, ուր ան օրավարձով քար կկոտրեր և հիմակ ալ քար կկոտրե, եթե կապրի։ Որովհետև որոշաղրված օրավարձով աշխատելով, հայրս պիտի կրնա յոթանասուն տարիեն հոգիվ վճարել իր պարտքը կառավարության։

Մորս հետ մնացինք մեջտեղ։ Հարկադրված՝ դացինք մոքաքրոջս քով, հինգուկ տնակի մը մեջ պատսպարվելու համար վեց հոգիով։

Ունեի ուսման պաշար և լավ, բանուկ արհեստ.— ատաղձագործ եմ։ Կրնայի մեր հացը շահիլ, բայց վրա հասավ տարիքիս փորձանքը՝ զինվորությունը։

Սեփական հայրենիքի մեջ զինվորությունը պարտականություն է. և փառք ու պատիվ։ Բայց այնտեղ, օտար երկրի մը մեջ կյանքդ տալ դրոշակի մը պատվույն և բարձրացման — դա հիմարություն էր։

Ձգե որ հոն մեկի զինվորություն ընել տալու տեղ՝ կլծեին գրատային տմեն տեսակ աշխատանքի։

— Այդ բոլորը իմացեր եմ ժամանակին և պետք եղածը՝ դրեր։

— Այս պայմաններու ստեղծումեն իսկ առաջ, արդեն վառված էի հայրենասիրությամբ։ Թերթերեն և ականջատացությունններեն տեղյակ էի մեր սովետական հայրենիքի կատարած նվաճումներուն։ Կիսափոդեի օր առաջ ուղևորիլ հայրենիք և անոր հոկա վերելքին բերել իմ աշխատանքի բաժինս։ Սակայն մայրս, հայրս արդելք կելլային։ Երբ հայրս տարին աշխատանքի և դիս ալ պիտի տանեին զինվորության, մայրս հոժարեցավ, որ Սիբիա անցնիմ որևէ ձևով։ Այդ ձևը գիտեք արդեն։

Մեկ ամսվա քաշկռտուքներե վերջ՝ պահակատուներ պահակատուն, Հալեպի մեջ, օր մը ալ եղանք սիբիական քաղաքացի։

Առաջին դարձս եղավ դարձ մը ճարել ապրուստս ապահովելու և վրա-դլուխս շտկելու համար։ Ապա դիմեցի պատ-

վանյալ մարմիններու և արձանագրվեցա ներդաղթողներու ցանկին մեջ։

Եվ որովհետև առանձին մարդ մըն էի, հարմար դատեցին զիս արձանագրել Մինասյան ընտանիքի վրա, որոնց ժանդակությունը վայելեցի Հալեպի մեջ, իբրև որոցով դրացի։

Գարնան վերջերն՝ ընդհանուր խանդավառության և հեհեհև սպասումին մեջ հայրենատենչ ժողովրդին՝ Հալեպ ժամանեցին Հայաստանի ներդաղթի լիազոր պատվիրակները և սկսան ներդաղթի նախապատրաստական աշխատանքները։

Այս միջոցին ես դարձա ձգեցի և մտա ներդաղթի կոմիտեին դրասենյակը, ուր աշխատած ատենս՝ երկու ամիս շաբունակ՝ ինձի տխուր պատեհությունը տրվեցավ մոտեն ճանչնալու հայանուն, տխրահուչակ կազմակերպություն մը, որ ծանոթ է դաշնակ անունով։ Ասոնք ամենեն ստոր միջոցներու կղիմեին խափանելու համար ներդաղթը— սպառնալիք, մատնություն, ահաբեկում, փայտ ու դնդակ, դաշույն ու մամուլ. այս բոլորը կդործածեին հուսահատեցնելու համար կոմիտեի մարդիկը և անոնց համակիր շրջանակները։

Դաշնակցության ծախված ղեկավարությունը իր կարգին խաբած, ծախու առած էր քանի մը սահակներու որոնց դիշերային հարձակումներուն, ցերեկային լուտանքներուն և հայհոյանքներուն դեմ պայքարեցանք վիրավորելով և վիրավորվելով, կուրծք ու սիրտ դեմ բռնելով անոնց դաշույններուն և դնդակներուն։

— Այդ բոլորը ծանոթ են ինձի և բարեբախտաբար հիմակ այդ բոլորը անցյալ և տխուր հիշատակներ են մը։

— Երբ մեր սովետական հայրենիքը հասնիմ, կմտածեմ կազմել ընտանիք, նվիրվիլ ուսումիս կատարելագործման՝ պետական համալսարանին մեջ, առանց մեկ կողմ թողելու արհեստս։

Իր խոսքին, իր պարզ, հասկնալի, տանելի երազնե-

ցուն, թե թեյին տաքութենեն նպաստավորված՝ ընկեր Դարբինյանին ճակատը կպտղեր քրտինքի կայլակներով։ Հիմակ, էլեկտրական առատահոս լույսին տակ, կարելի էր որոշակի զանազանել անոր դիմագծությունը՝ ուղղաձիգ, կանոնավոր քթովը, նորաբույս բեղերովը, կարմրուկ, թարմ ու թխամորթ այտերովը, առաջակարկառ և ամրարմատ կզակովը և խոշոր, արտահայտիչ, քարածիայնի փայլով աչքերով՝ լայնալիճ ու երկար խոպոպներով ծածկված ճակատի մը ներքև։ Շրթունքները նուրբ էին՝ մեջտեղեն ուռած և ժժգույն։ Դաստակները հաստ էին ու մաղոտ։ Մաղոտ էր կուրծքն ալ, որ լայնաբաց, չկոճկված շապիկեն կերևեր։

— Գիշեր բարի, ընկեր Մարգարյան, ձեզ ճանձրացուցի կյանքիս համառոտ պատմությամբը,— ըսավ ոտքի ելելով։ Շնորհակալ եմ թեյին և ժամանակին համար, զոր ընծայեցիք ինծի՝ այնքան փափկանկատությամբ։ Գիշե՛ր բարի։

Ձեռքս սեղմեց կորովի արտահայտությամբ և հեռացավ հաստատ քայլերով։

5.

Շոգենավուն և Բաթումիի մեջ, այնուհետև հաճախ հանդիպեցավ մեզի ընկեր Դարբինյանը, միշտ պատրաստի հարցումով.

— Բանի մը պետք ունի՞ք, ընկե՛ր Մարգարյան . . .

Հաճախ խոսեցանք իրարու հետ՝ սովետական սխրալի իրագործումներեն և մեր սեփական երազներեն՝ զորս պիտի կարենայինք իրագործել Սովետական Հայաստանի մեջ։

Եվ Բաթումիի մեջ բաժնվեցանք իրարմե։ Ընկեր Դարբինյան մեկնեցավ Գորիս, ես՝ Կիրովական։ Եվ իրարու հետք կորսնցուցինք։

Լենինի հրապարակը՝ իր դիրքով, տիպարով և կարևորությամբ կենտրոնն է հայոց մայրաքաղաքին։

Լենինի հրապարակն ասահեղաձև շրջանակող մայթերուվրա՝ միլիցիայի ցպիկին ցուցմունքովը մարդկային հոսանքը և հոսանքը ինքնաշարժներուն՝ կընեն իրենց կանոնավոր երթևեկը, որ կոկոի արևածաղեն առաջ երբ աշխատավորությունը կդիմե դարձի իր կայաններուն և կանէ մինչև կեսդիշերեն վերջ, երբ թատրոններն ու կինոները կպարպվին ամեն սեռի և տարիքի իրենց հանդիսականներեն։

Ամենուն արդիլված է երթևեկը խանգարել՝ դիշերները, ոտքով կամ կառքով կիսելով կպրապատ և հայելիի պես փայլուն հրապարակը։

Միլիցիայի ցպիկին ցուցմունքովը՝ Լենինի հրապարակն ասահեղաձև շրջանակող մայթերուն վրա, մարդկային հոսանքը և հոսանքն ինքնաշարժներուն՝ իր հունին մեջ վերիրող գետի ընթացքին պես կանոնավոր ու կարգապահ կահեր աշնան այդ դիշերը, ուր զենիթեն շողափայլող լիալուսինն էր հոկող՝ խոշոր աչքը այդ ծփանուտ եռուզեռին, որ երևանյան ժողովրդի մեկ մասն էր։

Մեկը դատվեցավ եռուն այդ գնացքեն՝ թափ տալով իր բազուկը պարապնդումեն ընկերուհիի մը — և քալեց միլիցիայի ցպիկին հակառակ ուղղությամբ՝ դեպի հրապարակ։

— Արգելված է, ընկե՛ր,— կթնդար ձայնը միլիցիային վերևեն ցպիկին, որ երթի ճիշտ ուղղությունը կցուցներ։

— Արգիլված . . .

Դարձեք ինքն իրեն հետ կխոսեր՝ ժողովրդեն դատված այդ սիլվեթը։

— Բայց, ընկե՛ր միլիցիա, ես պետք է կենամ այս հրապարակին ճիշտ մեջտեղը՝ հայոց մայրաքաղաքին սրտին

վրայեն զբուլյ անելու համար հայոց երկրի աղատիչ ընկեր Լենինի հետ . . .

— Արդեւլված է, քաղաքացի . . . Ինչու անպայման այս ժամուն, դու կրնաս ցերեկին գալ . . .

— Ուխտ ունիմ, ընկեր միլիցիա։ Դուն կրնաս օրենքը գործադրել ինծի նկատմամբ իրրև օրինազանցի։ Բայց ես ուխտս պետք է կատարեմ . . .

Ու սիլվեթը կքաշեր առանց տատամսելու, դեպի կենտրոնը հրապարակին։

Գլխի ինկած միլիցիան հարցուց.

— Դուն նորեկ ես, ընկե՛ր . . .

— Ես նորեկ եմ և նոր նորեկ, ընկեր միլիցիա։ Կըրնաս զիս դանակոծել, բայց ես ուխտս պետք է կատարեմ...

—Այստեղ սովետական երկիր է, ընկե՛ր։ Այստեղ քաղաքացիները չեն դանակոծում։ Միլիցիան ծառայողն է քաղաքացիներին, ընկե՛ր։

— Ընկե՛ր միլիցիա, ես մեկ քաղաքացին եմ Սովետական Միութեան, երկու հարյուր միլիոնեն մեկը միայն, նոր քաղաքացի մը, հպարտ՝ այդ պատվանունը կրելուն։

Միլիցիան կժպտեր։ Ժողովրդին հոսանքը կեցած կդիտեր նորեկը. մտիկ կըներ դայն։ Հավաքական ներողամտութեան մը, հավանութեան մը վահանովը զրահավոր, երիտասարդը հիմա կմենախոսեր կեցած Լենինի արձանին դեմ հանդիման։

— Ընկե՛ր Լենին,—կըսեր երիտասարդը,— մտիկ ըրե խոսքերուն՝ հեռուներեն իր սեփական, սովետական հայրենիքը եկած ուխտավորի մը, որ հարազատ մեկ զավակն է այս երկրին՝ հակառակ անոր տաքուկ ծոցեն շատ հեռու և օտար երկրի մը մէջ ծնած ըլլալու փաստին։ Մեկը այն հաղարավորներեն, որոնք կարավան առ կարավան կդիմեն իրենց աշխատավորական հայրենիքը՝ անոր կարոտովը տառապած ըլլալու, դայն ցանկացած, անոր տքնութեանց և նվաճումներուն մասնակից դառնալու վճռականութեամբ։

Մայթերը եզերելով ես կհետևեի երիտասարդին՝ երկու պատճառով։

Նախ՝ ձայնն ու դիմագիծն այդ երիտասարդին։ Այդ ձայնն ու դիմագիծը ծանոթ կթվեին ինձի. ճիգ ի գործ. կդնեի հիշելու այդ ձայնն ու դիմագիծը։

— Ընկեր Լենին, դուն և հանճարեղ ընկեր Ստալինը տվիք սեփական հայրենիք մը հայության։ Դուք տվիք զեղեցիկ պատեհություններ անոր, ընելու հայ պատմության մեջ դեռ չարձանագրված նվաճումներ։ Դուք բացիք ասպարեզ՝ երիտասարդության առջև, կատարելու հաղթարշավ թռիչքներ և ստեղծումներ։

Գիտակցության արևովը լուսավորված՝ քսան դարուններուս հրայրքովը կուխտեմ, կերդնում հավատարիմ մնալ քեզի և քու հոչակած սկզբունքներուդ, փառք քեզի և հանճարեղ դործակցիդ՝ Սովետական Միության մեծ ուսուցչին, որուն առաջնորդությամբ երկու հարյուր միլիոն եղբայրական միացյալ ժողովուրդ մը փառակերտեց հաղթանակը՝ ճամփա հարթելով նորանոր հաղթանակներու՝ աշխարհի աշխատավորության առջև . . .

Ընկեր Լենին, ես հաղարներու սրտեն կխոսիմ հիմա, ընդունե՛ մեզ իբրև քու հարազատներդ . . .

*
* *

Իր սրբազան պարտականությունը կատարած ուխտավորի մը ինքնաբավությամբ, կքալեր հիմակ երիտասարդը դեպի այդին, զոր աշունն իր դեղնադրոշմ շորերովն էր զդարշեր։

— Օ՜, ընկե՛ր Կարապետյան, դուն ալ Երևան ես եղեր...

— Անցյալ տարվա առաջին կարավանումն ենք եկել ընկեր Գևորդյան, հոդամաս ենք վերցրել Բաղրամյանում և տուն սարքել . . .

— Օ՜, պռավո, շնորհավորություններս . . .

Աչեն ձախեն, օդեն հովեն խոսակցությունները կսկը-

ին, կքալեն, կհևան, բայց չեն վերջանար։

Երիտասարդն արդեն հասեր էր այդին, ուր նոտա-բաններբը տակավին պարպված չէին իրենց հաճախորդնե-բեն։ Ես ու աղջիկ մը կհետևեինք երիտասարդին։

— Բարև՛ ձեզ, ընկերներ . . .

Երիտասարդին հնչուն ձայնը բյուրեղի պես կփշրվեր տանոնց գլխուն վերև՝ զարմանքի ալիք մը տարածելով ա-նոնց մեջ։

— Բարև՛, բարև՛ ...—ձայներ կրարձրանային բարձ-բացրած գլուխներբ։

— Բարով, բարով ես եկեր, ընկեր Դարբինյան,—գրեթե գոչում ես։ Ուրկե՞ ուր այսպես . . .

Կնայի խորունկ հետաքննին և մեկեն բաղուկները բանալով կխոյանա վրան՝ գրկելով պինդ պինդ։

— Ընկեր Մարգարյան, դուք հոս . . . բայց չէ՞ որ Կիրովական էիք գացեր Բաթումիեն։

— Հոս փոխադրվեցանք։ Երևան ավելի հարմար նը-կատվեցավ մեր ընակության համար . . .

— Ընկեր Մարգարյան, ձեզի ներկայացնեմ նշանածս՝ ընկերուհի Մանյա Հակոբյանը՝ ուսանողուհի Բժշկական համալսարանի, երևանցի։

Ու դառնալով նշանածին կհարե անսեթևեթորեն.

—Ընկեր Արշակ Մարգարյանն այն ծերուկն է, որուն հանդիպեցա շոգենավուն վրա։ Իրեն հետ մեր անակնկալ հանդիպումին և իրմե կրած տպավորություններուս մասին խոսեր եմ քեզի, Մանյա՛, կհիշե՞ս . . .

— Պայծառ հիշում եմ . . . Ուրախ եմ ծանոթանա-լուս . . .

— Ընկեր Մարգարյան, գիտեմ, որ այս գիշերվան ընթացքս տարօրինակ կգտնեք։ Ատիկա կկարդամ ձեր աչքերուն մեջ։ Իրավունք ունիք։ Բայց էլի, նորեկի մը համար նորություններ շատ կան Երևանի մեջ։ Խելքե միտքե չանցնող այնպիսի նորություններ, որոնք հայ

մարդու մը ուրախության դրվանը կլեցնեն ու կավելնան, մղելով ընելու խենթությունները . . .

— Հիմա ձգենք այս դիշերը, քիչ մը պատմե կյանքեդ, ուր դացիր, ինչ ըրիր . . .

— Ինչպես դիտեք, Բաթումիեն դացի Գորիս, ուր անմիջապես գործի մտա՝ եռանդով փարելցա անոր և շուտով դասվեցա սատանովյանների շարքը։ Բայց աչքս Երևանն էր. ուշ դրավված էր համալսարանով, ասաջադիմության տենդով։ Եվ ասիթը չուշացավ։

Խումբ մը բժշկական ուսանողներ եկան Գորիս՝ քննական պտույտի մը համար։ Անմիջապես ծանոթություն հաստատեցի անոնց հետ. առաջին կարգի վրա՝ ընկերուհի Մանյային հետ, որ, իբրև տանտիրուհիս մտիկ մեկ աղջկանուհին՝ մեր ընակարանն էր իջևաներ։

Թեև ինքզինքիս խոսք էի տվեր, որ մայրս քովս փոխադրելե վերջ մտածեմ ամուսնության մասին, բայց ընկերուհի Հակոբյանին կիրթ վարվելակերպն ու մտքի պաշարը, — ինչպես նաև ֆիզիկական շնորհները, — դիս պարտության մատնեցին՝ առաջին դրոհով։ Փոխադարձ համակրությամբ կապված իրարու մտավորապես՝ շուտով մտերմացանք և իվերջո նշանվեցանք՝ յոթնյակի մը ընթացքին։ Հիմակ այնպես համոզված եմ, թե դիրար հասկցող ու ճիշտ դնահատող ապագա ընտանիքի մը հիմը դրինք ամուր հողի մը վրա՝ այս աքթով։

Ընկերուհին Երևան հրավիրեց դիս՝ իր հացեն ձգելով ինծի։ Գործատեղիես ստացված տասնևհինգ օրվան արձակուրդով երեկ դիշեր ժամանեցի Երևան և ուղղակի դիմեցի ցույց տրված հասցեին, ուր դտա նշանածս։

Տասնևութը ժամե ի վեր կպտտիմ մեր մայրաքաղաքը՝ դրեթե առանց դադարի, մեկ հիացումե փոխադրվելով ուրիշ հիացումի մը, մեկ սքանչանք չվերջացած՝ հասնելով ուրիշ սքանչացման մը։ Առատ է և դորավոր լույսը, որ կհեղվի Երևանեն, անոր նյութեղեն հոյակապ կառույցեն և անոր նույնքան հրաշակերտ մտավորական պատկառանքեն, որ հուդիչ է, փոխանցիկ է և համապարփակ։

Մոտակա նստարաններուն վրա խոսակցողները բոլոր ալ բոլոր կշրջապատեին մեզ՝ շահագրգռված ընկեր Դարբինյանի անձովն ու մանավանդ խոսակցությամբը, որ թեմորեն բարձր կելլեր և որ եթե երբեմնակի դադարներով կընդհատվեր՝ կրկնակի հարցապնդումներու և անդրադարձումներու պատճառով, սակայն անսայթաք կբալեր դեպի իր տրամաբանական վախճանը։

— Երևանը վեր է մեր խանդավառությենեն։

Ու դառնալով մեր շուրջը հավաքված և հետզհետե սավաբացող հայրենադարձներուն՝ ոգևորված կհավելուր.

— Լավ լսեցեք, ընկերներ, Սովետական Հայաստանն, անոր սովետաշեն մայրաքաղաքը, անոր սովետահայ մարդիկն անհերքելի իրողություններ են։ Աշխատանքի, դրական գործի ինչ բաժին ունինք այդ իրագործումներուն մեջ, որոնք ոչ թե տարիներու, այլ դարերու կրճատումով, համառումով մեջտեղ եկած են։ Եթե հայրենիք դառնալով մեր բոլոր պարտականությունները կատարած եղանք կըկարծենք,— շատ կսխալինք, չարաչար կսխալինք։ Շատ չէ, հիսուն տարի մը ետ դացեք։ Ի՞նչ էր Երևանը կես դար առաջ, և ինչ վիճակ կներկայացնե այսօր՝ իրրև քաղաք և իրրև կուլտուրական կենտրոն։ Հոս ձեր մոտը, այդիին նստարաններուն թառող տեղացի ծերուկներ կան տակավին։ Հարցուցե՛ք անոնց, թե ինչ պատկեր կներկայացներ Երևան՝ նույնիսկ երեսուն տարի առաջ և այսօր ինչ դիմագծությամբ կներկայանա ան մեզի։

Ընկեր Դարբինյան տաքցած էր, իրրև սիրտն այրած, հոգին ճենճերված ոչխարքյան մը, կպարպվեր, հետզհետե ընդլայնելով ու տարածվելով։

Ժամացույցը կեսգիշերվան մեկը կցուցներ։

Պահ մը ընդհատելե վերջ իր խոսակցությունը, կըբկին ձեռք առավ խորհրդածությանց թելը՝ հասնելով եզրափակումի։

— Ա՛լ հոս եմ, ընկերներ, Երևանի մեջ։ Այսուհետև

կընանք ավելի հեշտությամբ խորանալ մեզ շահագրգռող նյութերու շուրջ։

Առաջ դեպի նորը,— կեցցե՛ նորը . . .

Դիշերը կառաջանար աշնան մեղմասույլ հովի թավիշին վրա՝ քսվելով ընկեր Դավիթի ճակատին, ուր եռանդի խարույկ մըն էր արծարծվեր։

— Դե, դիշեր բարի մաղթենք իրարու՝ այսօրվան համար, էլի կտեսնվինք, քանի որ հոս ենք . . .

Եվ ընկեր Դարբինյան ձեռք կուտա՝ հրաժեշտի համար։

Երբ նշանած զույգը լուսնով արծաթված ասֆալտին վրայեն կուղղվի Շահումյանի անվան հրապարակը, հոգեպարփակ սքանչացումով կդիտեմ համաչափությունն անոնց հասակին ու կլսեմ զընդուն ու ներդաշնակ դոփյունն անոնց քալվածքին՝ վստահ և կորովահեղձ, պատրաստ բարձրանալու գալիքի ամեն սանդղամատ, ընդաթուր կոխելով հավանական ամեն խոչընդոտ և դժվարություն։

Ու կմտածեմ.

— Ընկեր Դարբինյան իր բարեհարմար տեղն ու դիրքն է գտեր ընկերուհի Մանյային կողքին։ Ինչպե՞ս ալ կվայելեն իրարու . . . Որովհետև այս երիտասարդը փախստականն էր խորթ հայրենիքներու, հիմակ, որ իր սովետական հայրենիքին մեջ է, ան կարդին քաղաքացի է . . .

Ընկեր Դարբինյանն հիմա փախստական արտասահմանյան խրուտքի դորշագորշ աշխարհի հնհնուքներեն և մտալկումներեն, նվիրված է իր առաջացմանն՝ նվաճումն նվաճում իր վերելքին վրա. այդ կերպով իր բաժինովը սատարելով սովետական սխրապանծ իր հայրենիքին անհուն նվաճումներուն։

Հիմա հաճախ կհանդիպինք իրարու ու կրաժնվինք իրարմե անսեթևեթ, մտերմաբեռն, քաղցրաբեռն բարևելով դիրարներքին ինքնագոհության մը նորագիտ լույսովը կրկնապես երիտասարդացած։

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՎ ԱՆՈՐ

1.

1938-ի սանձագյան տարադրության մակընթացությունը Լուսիկը, իր զավակը և երկու հակերու մեջ ամփոփված ամբողջ հարստությունը նետեց Հալեպ, ուր միջավայրին հետ հաշտվիլ դժվար չեղավ Լուսիկին համար, տրված ըլլալով, որ հոս, բացի արաբերենի տիրապետութենեն, կենցաղային մնացած պայմանները տարբեր չէին Ալեքսանդրեթեն։

Լուսիկին առաջին գործն եղավ Մարկոսը դնել արհեստանոց-վարժարան մը, ուսման ասպարին հետ՝ ոսկի ապրջան մըն ալ անցնելու համար անոր դաստակին։ Եվ ինք մտավ տեղացի հարուստ ընտանիքի մը՝ Մյուերիսներու տունը՝ խոհարար-սեղանահարդարի պաշտոնով։

Միակ նորությունը, զոր կարելի է արձանագրել, Մյուերիսներու տան մեջ իր անվան փոփոխությունն էր։ Ընտանիքին մեծ հանրմը շատ հաճնեցավ իր քիմքին դյուրզգայնությունը՝ խոհանոցեն ներս և ձեռքերուն բարեհարմար դրվածք-շարվածքը՝ ճաշասեղանին վրա։ Միակ առարկությունը, որ կար, իր անվան Մյուերիսներու ընտանիքի անդամներուն անընտել արտասանությունն էր։

— Թեզմե առաջ մեր տունը եկած դացած սպասուհիները Մարյամ կկոչվեին. մեր լեզուները վարժված են այդ անվան։ Թեզ ալ կկոչենք Մարյամ, չըլլար Մարյամ . . .— քմծիծաղով պատգամեց մեծ հանրմը։

Լուսիկ համակերպեցավ այդ անվանափոխությանն, որ

տևեց լման յոթը տարի Մյուերիոններու տան մեջ, անկե դուրս պահելով իր ամբողջի անվանակոչումը։

Տաքին ու պաղին, ամեն օր ժամացույցի պես կանոնավոր կարթիններ Լուսիկ և երեկոյան կվերադառնար իր տունը՝ անուրթին տակ ծրարով մը՝ Մարկոսին համար, որ հակառակ հասակ առած՝ դեռ չափահաս երիտասարդ համարվելուն՝ միշտ իր հորթուկն էր։

Գործն ահեղորեն միօրինակ էր։

— Մարյամ, նախաճաշը պատրաստե . . .

— Մարյամ, հյուրերուն կաթով ուրճ եփե . . .

— Մարյամ, կաթնապուրը մի՛ մոռնար երեկոյան . . .

— Մարյամ, այսօր պեյին սիրտն ընկուլզով լեցված հնդկահավ կքաշե եղեր . . .

Լուսիկ բոլոր հրամաններուն ալ՝

— Գլխուս վրա,— կըսեր համակերպությամբ մը, որուն ներքև ամեն օր, կաթիլ կաթիլ կհավաքվեր կարոտը՝ սեփական ընտանիք և երդիք մը ունենալու, ուր ըլլար ինք իր գլխուն, ինք իր տիրուհին և եփեր թափեր իր ուզածին պես։

Ի՜նչ կարևորություն ուներ իրողությունը, որ մեկ ձեռքը եղի, մյուսը մեղրի մեջ էր։ Եղն ու մեղրը տանտիրոջ էին։ Այդ բոլորեն իր բաժինն էին ամենաժամյա հրամանները՝ մեծ ու փոքր հանրաճեներուն, մեծ ու փոքր պեյերուն։

— Ա՜խ,— կըսեր, որուն վրա կկղպեր թափն իր որտի փափաքներուն։

2.

Մարկոս հինգ տարվան միջոցին տիրացավ արհեստանոց-վարժարանի դուրդ վիճականներուն։

Արհեստը ոսկի ապրջանի նման կփայլեր դաստակին և մեջտեղ հանած դործերուն վրա։ — Լավ մեքենադործ և փնտրված արհեստավոր կհամարվեր Պոստան — Քլեպի մեջ։

Լռասեր երեխա՝ տարվա տարի վրա դրավ լռասիրությանը վրա այնքան, որ Մարկոսին համար լռակյացությունը երկրորդ բնություն մը եղավ։ Տան մեջ, թե դուրսը մունջ էր դրեթե կարդացածներուն մասին՝ դրքերու և թերթերու մեջ։ Հանդսաի օրերուն ժամ մը երկուք կնստեր որճարան՝ վարթի մը նարտ կամ թուղթ դարձնելու համար։

Սակավախոս էր մորը հետ ալ։ Գիշերները, գործ դարձին, երբ լուսին տակ կկարդար, մայրը շատ հեղ կըհեռաքրքրվեր սեղանին երեսն ամբողջությամբ սավանող, տղված թուղթի այդ կտորներով։

— Ի՞նչ են դրեր, Մարկո՛ . . .

— Ոչինչ . . .

— Ինչպե՞ս թե ոչինչ . . .

— Երբ օրը դա՝ կբսեմ . . .

— Ե՞րբ պիտի դա այդ օրը, օղո՛ւլ . . .

— Ինշալլահ՝ շուտով։

Մարկոսի ճակատին կնճիռներեն ոչինչ կարելի կըլլար գուշակել մորը համար, որ շարունակ բարի լուրի մը կսպասեր։ Բարի լուր մը, որ պիտի դար Հայաստան աշխարհի կողմեն և վերջակետը պիտի դներ տառապանքներով լի իր նեբկա կենցաղակերպին, զինքն ալ տեր դարձնելով սեփական աշխատանքի և ընտանեկան կտուրի մը։

Կբսեին, կլսեր, թե ոչ շատ հեռու տեղ մը, լեռներե և ծովերե անդին, հայրենիք մը ունեինք, որուն արեգակն ավելի լուսավոր էր, օդն ավելի կենարար, ջուրը՝ կենսատու, ցորան ավելի հաճելիորեն խիտ և ուր աշխատանքը կանոն էր և ընտանեկան ծածկը՝ պայման։

— Ա՜խ . . .

Ըսված բոլոր այդ բաները կարոտի խարույկ մը կվառեին կուրծքին տակ, ուրկե բարձրացող սղավոր ձայներուն քոմը ի վեր նվադի կելլեր անծածկելի ուրախության հնչում մը ալ։

— Ա՜խ . . .

Ի խորոց սրտի արձակված այդ հառաչանքին մեջ

կար ափսոսանք մը՝ զուր անցված անցյալի մը համար, ուր կենսախայտ երիտասարդություն մը աշնան տերևներուն էր խառնվեր և որուն մեջ սրունք կպրկեր ամպարանք մը — վավերական գոյացություն մը քառասունի սարն անցած բոլոր մարդոց մոտ — դալիք ին համար, որ պիտի ըլլար իր սղեղանիոնը այնքան ուժեղ և բուժարար, որ մոռցնել պիտի տար իր շրթներուն մատուցված բոլոր դառնությունները՝ զանոնք փոխարին ելով տակավին իր քիմքին անծանոթ, նորատեսակ քաղցրեվենիքով

— Ա՜խ, Ք՜ըր, Ք՜ըր, դավակս . . .

Մարկոս կժպտեր լռությամբ և խորին հասկացողությամբը մտերմության մը, որ տարիներու սրտաց փոխադարձ հարատացությամբ գոյացեր էր մոր և զավկին միջև։

3.

Ամառը, լիալուսին գիշերվան մը սկզբնավորության, Լուսիկ կանուխ էր դարձեր տունը, ուր Մարկոս, սեղանին առջև, դարձյալ քիթը մխրճած էր թերթերուն մեջ։

— Նորեն այդ պարապ թուղթե՞ը . . .—սրտնեղեցավ՝ մայրը։

Մարկոս վեր առավ քիթը, որուն երկու կողմերը նեբողամտության և քաղցրության ժպիտ մը էր փակցվեր։

— Այսօր պարապ չեն թուղթերը, լավ լուրեր կան, մայրիկ . . .

— Չե՞ս խաբեր զիս . . .

— Սովետական Հայաստանը մեզի իր գիրկը կկանչե... Նայե, չե՞ս տեսներ, մեր բոլոր թերթերը իրենց խոշորագույն տառերով կավետեն այդ իրողությունը . . .

— Սա խոշոր գրե՞րն են այդ ավետիսը տվողները— մատը գրավ գրերուն վրա։

— Այո, ճիշտ ու ճիշտ ատոնք . . .

— Դե՜հ, ուրեմն պատրաստվինք վաղը, Մարկոս։ Ար-

դեն ինչ ունինք որ . . . Երկու սնտուկ, երկու անկողին, սեղան մը, դարակ մը, չորս աթոռ, հինգ ծրար հագուստ, երկու տոպրակ ձավար, երկու լեցուն կահույք եղ, թիթեղ մը ձիթապտուղ և մանր մունր բաներ . . .

— Հելե այդքան մի՛ ճճապարիր, մայրիկ, մենակ դուն չես . . .

— Ինչո՞ւ չճապարեմ։ Մենք պիտի չերթանք, հապա ով պիտի երթա . . .

— Այդպես չըսի, մայրիկ։ Անշուշտ պիտի երթանք, երբ ժամանակն ու կարգը մեզի հասնին . . .

Բաղձացված այդ ժամանակը չուշացավ։

Ներգաղթի գործերը արագընթաց հունի մը մեջ մտան, ուր թավալեցան անսայթաք և կանոնավոր կերպով՝ զիմելով նպատակակետը։ Կազմվեցան Ներգաղթի կոմիտեները և պատրաստվեցան Հայաստան մեկնիլ փափաքողներուն անվանացանկերը, որոնց մեջ մտավ՝ ուրիշ հազարավորներու կարգին՝ Լուսիկի անունն ալ։

Լուսիկ այնուհետև տենդի մեջ էր կարծես։ Աշխատանքն ազատ իր ժամերուն՝ կվազեր ծանոթներուն, որոնք որևէ կերպով կզբաղեին ներգաղթի գործերով, խնդրելով, որ զինք մտցնեն Հայաստան մեկնող առաջին կարավաններուն։

— Ահավասիկ երկու զույգ աշխատող ձեռքեր հայրենիքին. մայր ու զավակ կաշխատինք. ավելի ինչ կուզեք... Մենք արժանի չենք, հապա ո՞վ արժանի է մեկնելու . . .

Մեյ մըն ալ կդառնար Մարկոսին և անոր զլխուն, կբանար մեղադրանքի տոպրակը։

— Ինչո՞ւ կանտանաս. փառք աստուծո, բերանդ լեզու ձեռքդ զրիչ ունիս, ինչո՞ւ չես երթար կոմիտեին, Հայաստանի պատվիրակներուն ինչո՞ւ զիմում մը չես զրեր՝ անոնց հասկցնելու համար մեր վիճակը։

— Ինչ մը համբերե, մայրիկ . . .

Համբերություն էր մնացեր Լուսիկին քով։ Հայրենիք մեկնող ամեն կարավանին հետ տենդահարության ջերմա-

չափը կրաբձրանար անոր մոտ։ Կղակը կառատանա սպառնալիքն ու արցունքը կրազմապատկվեին։ Բայց այդ բոլորը օգուտ մը չունեցան Լուսիկն ու զավակը մուծելու առաջին տարեշրջանի բախտավորներուն մեջ։

4.

Եղանակի բերումով, Հայաստան մեկնող կարավաններու առժամանակյա կասումին հետ՝ դաղթահայ իրականությունը շարունակ պղտոր պահել ձգող կազմակերպություն մը, ըստ տարիներու իր սովորության, սկսավ փողոցային սպրդասացությանց, կոնակեն հարձակումներու, խոշտանգումներու, ոճիրներու և լրագրական լրջենի արշավի մը՝ հայաստանյան տարբերուն և ներգաղթին դեմ մանավանդ։

Բայց Լուսիկ այդ վայրերանությանց և սպառնալիքներուն ականջ կախողը չէր։ Ընդհակառակը՝ բոլոր այդ հարձակումները ավելի կհրահրեին իր մեջ փափաքը՝ օր առաջ ըլլալու Հայաստանի մեջ։

Մարկոս քանի մը անգամ հայաստանյան ֆիլմերուն տարավ մայրը։ Սինեմայե դարձին՝ Լուսիկ ավելի կրակ կարած կըլլար։ Զայրույթ ու նողկանք կպոռթկար դաշնակներուն դեմ և իր հիացումը կհայտներ Հայաստանի հանդեպ։

— Փորերնին չի տանիր, չեն կրնար քաշել հայրենադավ այդ լակոտները, — կմրմռար։ Այն ինչ տուներ, ինչ շենքեր՝ բանվորներու բնակության համար։ Այն ինչ պատուղներ, ինչ աղվոր տեսարաններ . . . Հելե սիրուն Երևանը, ինչ հրաշալի քաղաք . . .

Եվ ձայնը կձգեր իր զիացած կերպովը երգելու համար.

— Հայաստանի ոտան սիրուն Երևան . . .

Այդպես անցան ձմեռն ու գարունը։ Ամռան առաջին տաքերուն հետ հասան Հայաստանի պատվիրակները։

Լուսիկ ալ Մարկոսի դանդաղության և համբերանքին չէր վստահեր։ Ինքն էր, որ կիյնար դանեղուս։ Մտասեռումը մեկ էր միայն.— Հայաստան մեկնիլ ամեն գնով։

Իր անվերջ փնտրտուքներուն միջոցին վերջապես գտավ հեռավոր ազգական մը, որ Ներզաղթի կոմիտեին հետ մոտիկ ու մտերմիկ հարաբերություն ուներ և անոր համար ալ գիշերային հարձակումի մը ենթարկվեցավ դաշնակ ոհմակի մը կողմե և հիմա վիրավոր կպառկեր տունը։

Լուսիկ զարկավ անոր դուռն ալ և նողկանք հայտնելե վերջ իր վրա կատարված վատ արարքին համար, խոսելով իր մասին վճռականությամբ հայտարարեց.

— Այս տարի անպայման պետք է Հայաստան գրկեք մեզ . . . Հայաստան մեզի պես մարդիկ կուզե։ Երկուքս ալ աշխատող ենք. ձեռքերնիս, ոտքերնիս կրունե, փառք տուած . . . Մինչև որ խոսք չառնեմ, ոտքս հունտ չեմ դներ . . .

Եվ իրավ որ խոստում չառած դուրս չելավ տունեն այդ հեռավոր ազգականին, որ կմկմալով կեսրերան ըսավ.

— Լավ, Լուսիկ տիկին, քանի որ այդքան կպնդես, կխոստանամ քեզ ինձի հետ տանիլ Հայաստան . . . այս տարի։

Ուրախությենեն քիչ մնաց խենթանար Լուսիկ . . .

5.

Հիրավի Արշամը բռնեց իր խոսքը։ Շուտով կարգի դրավ իր գործերը. ծախվելիքները ծախեց, մնացածը, ինչ որ կար տանը մեջ, ծրարեց, հակերու մեջ ամփոփեց և պատրաստվեցավ երկրորդ կարավանին հետ մեկնելու։

Լուսիկ դրեթե ամեն գիշեր ծանոթ Արշամին տունն էր։ Ինքն ալ իր կարգին ամեն պատրաստություն տեսած էր արդեն։ Ոտքը ասպանդակին էր։

Վերջապես ցանկալի օրը՝ այնքան դանդաղելե, տնտրնալե հետո՝ եկավ հասավ, և Լուսիկի տունը՝ Արշամի ըն-

տանիքին վրա արձանագրված՝ ելավ մեջտեղ, բախտավորներու ցանկին իրրև մաս։ Մ՛լ Լուսիկի ստքերը դեռին չէին դպեր։

— Մեր ալ թիվը ելած է, տարոսը ձեղի, — կըսեր դեմը ելլողին։— Ինչալլահ դուք ալ կրախտավորվիք շուտով և մեզի կհասնիք . . .

6.

Շոգենավի վրա ընկեր Արշամի ընտանիքին հետ էր Լուսիկ։

Հայբենադարձ նավը հաղթականորեն կճեղքեր կապույտ ջուրերը Միջերկրականին, տանելով համայնական, շարժուն խնդության մը կենդանի պատկերը։ Սիրիայի և Լիբանանի տարբեր անկյուններեն իրարու եկած ներգաղթողները տեղական դանազան սովորություններով, նիստ ու կացով, դույնզդույն տարազներով և դարմանազան բարբառներով հաճելի տեսարան մը կպարզեին Լուսիկին, որ օրվան մեծ մասը նավուն ամեն անկյունները շրջագայելով կանցներ, դիտելով ներգաղթողներուն ամեն ժամյա ուրախությունները՝ երգերու, պարերու, կերուխումի հոբձանքին մեջ դինովցած, զվարթած, խենթեցած։

Ճամփորդության երկրորդ գիշերը, բայց ծովուն վրա, Շոգենավի մեջ տեղի ունեցավ հարսանիք մը, զույգ ջուրթակներով, դափերով, կիթառներով, անհամար և անհրաժեշտ հարսնևորներու մասնակցությամբ։ Լուսիկ ձեռքերը դոտին խրած՝ խրեցավ ծովուն մեջ իր անցյալին, ուր ինքզինք գտավ տասնևյոթ տարեկան թարմատի աղջիկ։ Զկըրցավ զսպել շրթունքները բացագանչելու համար.

— Հեյ կիտի օրեր . . . Երանի թե հո ալ հիմա տասնևյոթ տարեկան ըլլայի . . .

Երաշն՝ ավելի շեշտադրված՝ շարունակվեցավ Բաթումիի մեջ, ուր Լուսիկ առաջին անգամ ոտքը դրավ Սովետական Միության սրբազան հողին վրա և ականատես եղավ անհամար նորության։

Տեսավ նորեկներու հակերը կրող շողեշարժ կառքերը վարող ռուս աղջիկները և բերանաբաց պոռաց.

— Ապռ, Մարկոս, օղուլ կտեսնես, ինչ աղվոր, ինչ նրբին ու նազենիմ աղջիկներ են և կառք կվարեն այր մարդերե ավելի ճարպիկությամբ . . .

— Մայրիկ, Սովետական Միության մեջ կիները այր մարդոց հավասար իրավունք կվայելեն։ Չտեսնիր զինվոր աղջիկները, որոնք պահակ կոպասեն . . .

— Ո՞ւր, ո՞ւր, օղուլ . . .

— Մեր դարանթինային շուրջը։ Մեյ մը փորձե դանթինայեն դուրս ելլել, պիտի տեսնես, թե աղջիկները ինչ արթուն և խիստ պահակներ են։

— Ապռ, ըսել է աղջիկները զենք գործածել գիտեն։

— Այր մարդու պես, մայրիկ։ Հապա բժշկուհիները, որոնք նորեկներուն հիվանդները կդարմանեն, չտեսնիր . . .

— Ես անոնք հիվանդապահուհի կկարծեի։

— Չտեսնիր առաքինաբույժ աղջիկները։ Վաղը Սովետական մեր Հայաստանին մեջ պիտի տեսնես պետական գործիչներ, վաստակաբեր, դատավոր և նախագահ աղջիկներ ու կիներ . . . Ինչ մը համբերե, մայրիկ . . .

Եվ տակավին նորություններ, միշտ նորություններ, որոնք հաղիվ գծագրված իր հիշողության պատատին՝ կսրբվեին, ուրիշ նորության հաջորդությամբ, դարմանքե դարմանք թավալելով Լուսիկը։

— Ապռ, Մարկոս . . .

Կեսօրին նորեկները ճաշարան հրավիրվեցան հատարակաց ճաշի։ Ճաշարանն ընդարձակ պատսպարված տեղ մըն էր, ուր ճաշի սեղաններուն կսպասարկեին հայատանցի և բաթումիարնակ հայուհիներ։ Հատարակաց ճաշի այդ սեղաններուն առջև նստած կճաշեին նորեկները մեծ խումբերով։

Լուսիկ տեսավ, թե ամեն մարդ ինքզինքին կծառայեր։— Մարյամ, կիրակուր բեր, ամանը տուր, ջուր տուր բոլոր չկար։

Տեսավ Ատաղ ու Մահիկ եղբայրներն ալ, որ իրեն մատակա սեղանի մը առջև կճաշեին, Լուսիկ մատնացույց ըրավ դանոնք իր զավկին։

— Նայե՛, Մարկոս, Ատաղ ու Մահիկ եղբայրներն ալ հոս են, մեկի հետ կճաշեն . . .

— Այո, հոս են. ուր պիտի ըլլային արդեն։ Ճաշելու տեղը ճաշարանն է։ Ամենքը հավատար են հոս, մայր ի՛կ. . .

— Փառք քեզ . . .

Խոսքը չլմնցուց, դարձավ Մարկոսին։

— Օղո՛ւլ, բոլոր այս հավատարութիւններն ընողը ո՞վ է . . .

— Չքո՞ս դիտես, մայրիկ . . . ընկեր Ստալինն է, Հայր Ստալինը . . .

— Փառք քեզ, Հայր Ստալին։— շուրջիններեն լսելի ձայնով մրմնջեց Լուսիկ և տարիներու իր սովորութիւնը համաձայն խաչակնքեց ու զդալն առավ ճաշելու համար հատարակաց ճաշասեղանին վրա՝ ներքին գոհացումի մը ճառագայթը դեմքին տարածված, այլակերպած զինք, իրմե ստեղծած նոր կին մը, որ արժանի էր ըլլալու, կոչվելու Սովետական Միության քաղաքացուհի։

8.

Յուրաքանչյուր վագոնի մեջ, ուր կարելի ամեն հանգստավետություն նախատեսված և ապահովված էր, տաս-

նական ընտանիքներ զետեղված էին՝ տասնապետի մը գլխավորությամբ։

Լուսիկենց վագոնին տասնապետը ընկեր Արշամն էր.— մի պարոնը մոռցված էր և տեղի տված ընկերին,որ մտերմության, հավասարության և տաքության ալիք մը կտարածեր վագոնին մեջ՝ հոն տեղ գրաված ամեն մեկ ընտանիքին և անոր յուրաքանչյուր անդամին տալով աբժանի կարևորություն մը և դեր մը։

Ուրախությունը ծայր տվավ ինքնաբերաբար, առանց որևէ ազդանշանի, վագոններուն մեջ, երբ կառաջարը շարժեցավ Բաթումիեն դեպի Երևան՝ օգոստոսի այդ դով ու լուսնակով գիշերվան խաղաղությունը պատռելով կրկնակի սուլոցով, որ տոնական կանչի մը պես տարածվեցավ հարալույս նավահանգստին վրա։

Շիշերուն զարնվող դդալները նվագարաններ էին։ Երգն ամենուն բերանն էր՝ առանց խորության սեռի ու տարիքի։ Խնդությունը կղտիներ կուրծքե կուրծք, որոնց տախտակը նեղ կուգար տանելու համար այս սրտաբուխ և հորդեռանդ ոգևորությունը հայրենադարձ բազմությունները։ Երգն ու նորատեսակ նվագը առանց դադար առնելու տեղի կուտար պարերուն, նվագակցությամբ ափծափիկներուն։ Եվ փոխադարձաբար։

Կարծեք հարսանեկան այդ կանչերուն մեջ՝ Լուսիկին ձայնը դադրիլ չուներ՝ զրնգուն իր ներդաշնակությամբը։ Ընկեր Արշամին փաղաքշորեն ալիրական հորդորը մի հանդատանալու՝ իր արձագանքը գտավ հայրենակարոտ ուղևորներուն մեջ։ Միայն Լուսիկն էր ընդդիմախոսողը։

— Դուք քնացե՛ք, ես աչքերուս հենակ պիտի տամ մինչև հայրենական հողը հասնիլս։

— Սովետական հողին վրան ենք արդեն։

— Գիտեմ որ սովետական հողին վրան ենք, ես կըսեմ մինչև մեր Սովետական Հայաստանը հասնիլը պիտի չքնանամ։

Կառաշարը կդրդար երկաթյա ղուդահեռ իր գծերուն վրա և կարծեք կօրրեր հայրենակարոտ ու հողնավաստակ ուղևորները՝ հրավիրելով հանդստանալու և այնուհետև քունին մեջ շարունակելու անխառն իրենց ուրախությունը, ուր չկար մղձավանջային որևէ ստվերածում, որ անցյալինն էր ալ հավիտենապես։

Շոգեմեքենան կշարունակեր սովորական իր արագընթաց վազքը։ Հատուկոտոր, հապաղած երդեր տակավին կլսվեին այս ու այն վակոնեն, ատեն ատեն։

Լուսիկ մինակ նստած վակոնին դռան քով, ուսովը հենած անոր՝ անթարթ աչքերով շրջակա տեսարանները կխուզարկեր։ Երբեմն կարոտը իր փքոցով կուռեցներ այրին, անիմանալի երաղներով լուսավորելով ճամփան իր երևակայության, որ կթևածեր միջոցին մեջ ազատ ու առանց դադարի։ Երբեմն երգի բրդուճ մը, մրմունջ մը կլարեր հաղագին մեջ և դեմ կբռներ վագոնեն բարձրացող խռմբոցներուն։

Արշալույսի շաղավեռ զովության մուտքը դոնեն ներս ճապկոտիլ տվավ քնացողներուն մեծամասնությունը։

— Բարի լույս, ընկեր Լուսիկ։ առատություն եղանդիր։ Խոսքդ բռնեցիր առաջին գիշերվան համար։ Կերևի արթուն հոկեր ես . . .

— Լույսդ բարի ըլլա, լույսը վրադ դա, ընկե՛ր.— կմրմնջեր Լուսիկ առողջ ու լեցուն ձայնով, անվրդով ժըպտելով իր պարտականությունը անթերի կատարող պահակ զինվորի մը նման։

9.

Այսպես անցան երկու գիշերներ և ցերեկ մը՝ կառաշարի շրջակայքը տարածվող դաշտերու, ցանքերու, ջուրերու, սարերու, գյուղերու և քաղաքներու տեսարանափոխությամբ, որ Լուսիկին տպավորությունները, հետևաբար՝ տրամադրությունները մակընթացության մեջ կպահեր։

Երկրորդ օրվան իրիկնամուտին կառաջարը իր ծխարձակ գլուխը հանկարծ թեքեց և իր օձագալար իրանովը մտավ ձորի մը մեջ, ուր բյուրեղ բյուրեղ փշրվող ջուրի երիզի մը եզերքը բացվեցավ համայնապատկերը պարտեզներու։ Դիմացը սարն էր՝ վայրի կանաչությամբ ալեծուփ։ Ձեռքերուդ հասողության սահմանին մեջ էին շարքերը մրգառատ ծառերու, ընդհանրապես խնձորենիներ և սալորենիներ՝ բեռցված դույն դույն, արևահամ շարոցներով իրենց պտուղներուն, որոնցմե բարակ հովի մը թևերուն վրա տարածվող քաղցրիկ բույր մը կդդվեր ուղևորներուն և բոլորը ստքի կհաներ խճողելով վակոններու դռներուն և լուսամուտներուն առջև։

— Հոգ՛ի վկա, հայրենական հողերուն հասանք, ընկերներ,—ձայնեց Լուսիկ, որ տեսավ դռան մոտն էր՝ աթոռակի մը վրա։

— Ինչ՞ն գիտես.— տասը բերան մեկ անգամեն հարց տվին։

— Ձե՞ք տեսներ. տեսարանը մեկեն փոխվեցավ։

Վագոններեն դուրս խուժեցին հայրենադարձները, որոնցմով հինգ վայրկյանի մեջ ողողվեցավ պոտիկ կայարանը՝ ներսով դուրսով։

Լուսիկ առաջին իջնողներեն էր։

Հեռացավ, մեկուսացավ բազմությենեն և ուխտավորի երկյուղածությամբ ծունը իջավ, համբուրեց հայրենի հողը կուշտ կուշտ, որմե ափ մը առավ, քսեց դեմքին ու ճակտին ու սրտին անկասկածելի խորությունները պոռթկացող կաթիլով մը աչքերը բարձրացուց հայրենի լեռներու ձյունանիստ կատարներուն։

— Հո՛ղ, հայրենի հո՛ղ, ինչո՞ւ այսքան քաղցր ես դուն...

Հայրենադուրկ, հալածական հայության հաղարամյակի մը հառաչն ու կարոտն էր հայրենի հողին, որ կքակվեր Լուսիկի համբույրով։

— Սա մեր սիրուն Երևանն է, հԷ, Մարկոս . . .

— Այդպես է, մայրիկ, Երևան հասանք։

— Մեր մուրազին հասանք ըսե, օղու։ Մինչև որ այս օրը անսանք, աչքերնուս արմատը կապուացավ . . .

— Ա՛լ ասկե հետո . . .

— Ա՛լ ասկե հետո ըլլալիքը ինծի ձգե, օղու . . .

Բեռնատար ինքնաշարժները եկած խանված էին կայարանին դուրսը։ Ամեն հիմնարկ՝ իրենց արտեսին համաձայն և ըստ ցուցակի՝ հայրենադարձներուն մեջ իր մարդիկը կփնտրեր, կդտներ, կառներ կվերադրեր քաղաք, իրենց հատկացված բնակարանները։

Եռուզեռ կար կայարանին ներսը՝ հայրենադարձ ներդաղթողներուն մեջ, դուրսը՝ ներդաղթի գործերով շահագրգռված մարդոց մեջ։

Ձեռքն անվանացանկով ընկեր մը բարձրաձայն կդոռար Լուսիկին անունը՝ վագոնե վագոն։

— Լուսիկ Հայրապետյան, զավակը՝ Մարկոս, մեքենագործ . . .

— Այս կողմն է, ընկե՛ր . . . Մենք հոս ենք։

— Ո՞ւր են ձեր դույքերը։

— Հոս, երկու վագոն անդին։

— Պատրաստվեցեք, ավտոն պատրաստ է ձեր բնակարանն առաջնորդելու ձեզ։

— Մենք պատրաստ ենք միշտ . . . Հայտե՛ Մարկոս։ Աճապարե, անտանալու ժամանակը չէ. երթանք մեր տունը։

— Պատառ մը բան տուր, որ գործի սկսինք։

— Ա՛ռ, բայց գործը մի ձգձգեր։ Կզակիդ հետ թող ոտքերդ, ձեռքերդ ալ շարժին, տղաս։ Կլսե՞ս, սա խրխռացող ավտոները հազար նվազե ավելի անուշ կհնչեն ականջիս։ Կտեսնե՞ս սա երիտասարդ բաղուկները, որոնք մեր հակերն ու սնտուկները շալկած կտանին, անոնք իմ աչքիս կողովներով ծաղկեփունջերե ավելի կարժեն։ Հայտե՛ Մարկոս . . .

Մարկոս մեկ կծամեր, երկու կքալեր, մեկ կկլլեր հաց-յով պանիրի պատառը, երկուք ուս կուտար դույքի բեռ-ներուն։

Երկու ժամ վերջ, մայր ու զավակ և իրենց դույքերը բոլոր՝ իրենց նոր բնակարանն էին, որ կգտնվեր բազմա-հարկ հոյակապ շենքի մը երկրորդ հարկին վրա, 128 հա-մարով, բաղկացած երկու սենյակներե և մեկ խոհանոցե։ Ուներ լայն, կրկնապակի պատուհաններ, որոնք կբացվեին բանուկ պողոտայի մը վրայեն՝ երևանյան թաղամասի մը համայնապատկերին՝ կտրելով ծխացող բուխարիկները քա-նի մը դարձարաններու։

Լուսիկ դարձավ իրենց օգնող երիտասարդներուն.

— Ձեռքերնիդ դալար, ընկերներ . . . Ե՞րբ պիտի ակսինք մեր դործերուն, զավակս՝ մեքենադործության, ես՝ խոհարարության . . .

— Կարդադրվել է, որ երեք օր հանդիստ ընեք։ Երեք օրից լուր կտրվի ձեզի՝ ձեր դործերի մասին։ Ուրիշ անմի-ջական բաների պետք ունե՞ք . . .

— Ձեր ողջությունը, ընկերնե՛ր . . .

— Ուրեմն առայժմ ցտեսություն։

— Բարով երթաք. դառնաք բարով, ընկերներ . . .

*
* *

Մինչև երեք օր Հայրապետենց դրանցումները կա-տարված էին՝ շնորհիվ Լուսիկի փութեռանդ պնդումներուն՝ ամեն բան կարդադրված, կանոնավորված տեսնելու։

— Ա՛յ Երևան ենք։ Ուզածիդ չափ կրնաս պատիլ, Մարկոս, և տեսնել՝ տեսնելիք ամեն տեղ ու ամեն բան։ Հիմա կարևորը դործի պատրաստ ըլլալն է։ Դործը մերն է, մեր պետությունն է, ինչպես օդն ու ջուրը, ինչպես սա կոկիկ բնակարանը՝ իր ամեն հարմարություններով։

11.

Ամառվան Մարկոս ժպտուն դեմքով մտավ երկա-բեց թղթադրամներու տրդակ մը։

— Ամսական է, մայրիկ։

— Այս որքա՜ն դրամ, Մարկոս, քանի՞ մանեթ է։

— Հազար հինգ հարյուր մանեթ։

— Ինձի ուրը հարյուր տվին։

— Մերինը ամսական ռոճիկ չէ, մայրիկ։ Մեր կատարած գործի դլուխ կվճարեն մեզի։ Այս անդամ լման վճարեցին, բայց ըսին, թե ամուրիության տուրք պիտի դանձեն առաջիկա ամիս։

— Ի՞նչ հարկ է եղեր ատիկա։

— Ամուրիներեն ամսե ամիս, իր շահածին մեկ չնչին մասը կպահեն։

Լուսիկ վայրկյան մը մտմտաց՝ ծնոտը աջ ափին հենած։ Ապա՝

— Ի՜նչ լավ օրենք,—բացագանչեց ամբողջ ուժովը թոքերուն.— տեսա՞ր օրենքը, քեզի պես տղաները կարդի բերելու։ Հիմակ ալ լեմ-ճիմ չկա։ Պիտի կարդվիս, որ անուշիկ զավակներով շրջապատվիս դուն և անուշիկ թոռնիկներով շրջապատվիմ ես . . .

Մարկոս կժպտեր։

— Ե՞րբ դեմ եմ կեցեր արդարացի փափագներուդ, մայրիկ։ Գոնը հատ մը երևանցի աղջիկ ինձի համար . . .

— Իմ հաճելիս կարևորություն չունի, դուն պետք է հաճելիս։ Հոս աղատություն կա։

Մարկոս կեցավ։ Ուշի ուշով կդներ մորը դեմքը, որ վար հակած էր և կշանար ծածկել ուրախությունը։

— Հիմակ դնա կոլխոզ շուկա, Մարկոս, քիչ մը թարմ միս դնե, շատոնց իվեր չիյ-քյոֆթե չենք կերած։ Չիյ-քյոֆթե մը շաղենք . . .

12.

1948 մարտի 5-ը հիշատակելի օր մը եղավ Հայրապետական Լուսիկի և Մարկոսի համար։

Զարսի ծառայողը, երիտասարդ աղջիկ մը, կատարեց

Մարկոսի ամուսնության արձանագրությունը, ըստ որում Հայրապետյան Մարկոս Կիրակոսի, 27 տարեկան, վարպետ մեքենագործ, ներգաղթած Սիրիայեն, կկարգվեր Գրիգորյան Սոնյա Գևորգի հետ, 1930-ին ծնած Երևանի մեջ, ինստիտուտի ուսանողուհի։

Երեկոյան, ճաշով և գինիով առատ սեղանի մը շուրջ հարևաններ,— որոնց հետ մտերմիկ հարաբերություններ ունեին— և հայրենադարձ ծանոթներ բոլորակ մը կազմած էին՝ տոնելու համար Մարկոսի հարսնիքն ու ստախանովյան արհեստավոր կոչումը՝ աշխատանքի առաջին վեցամսյակի վերջավորության։

Մթնոլորտի տաքցած մեկ պահուն, Սոնյայի կողմեն հայտարարվեցավ վերջին պարագան՝ ի գիտություն ներկաներուն և «Սովետական Հայաստան»,ուր գրված էր Մարկոսի պատկերն ու գրված՝ կենսագրականը, ձեռքե ձեռք անցավ։

—Օ՜խ, յա՛, ընկեր Լուսիկ, գոչեց լռասեր Մարկոս, ուրախության գենիթը հրված տրամադրությամբ, օ՜խ,—յա՛, ես ստախանովյան եմ, դուն ստախանովյան չկրցար ըլլալ յա՛...

Խնդաուիթ անակնկալը եթե Լուսիկին սիրտը հպարտությամբ կլեցներ, բայց նույն ատեն եղավ անդրադարձումի պատճառ մը իր պակսած ուժերուն, իր տարիքին։ Մայրագորով զրդանքով հոգդող համբույր մը գրավ իր գավկի ճակտին և Սոնյայի շառագունած այտերուն և հարեց.

— Կյանքը ձեր առջև է, զավակներս։ Գործն ու ասպարեզը ձերն են. վայելքը՝ նմանապես։ Կրնաք առաջադիմել, հասնիլ բարձր գիրքերու։ Մենք մեր օրերն սպառեցինք օտար ափերու վրա՝ ծառայելով օտարին։ Դուք պիտի ծառայեք մեր հայրենիքին, ուր տեր ու ծառա գոյություն չունի, ուր ձեր աշխատանքին պտուղները պիտի վայելեք դուք և համայնքը միանգամայն։ Մենք մաշած ենք արդեն . . . բայց էլի կաշխատենք մեր չափովը։

— Այդպիսի խուսք վերհիշումներու ժամանակը չէ հիմա, մայրիկ։ Անոնք անցյալ են ալ. — մեռած, փտած բաներ։ Հիմակ աշխատե հարմարիլ նորին, քու կարգիդ և քու բաժինովդ ծառայել մեր հայրենիքին, որ պետք ունի համայնական ճիգերու՝ համայնական նվաճումներ ընելու համար։ Տարիքն ինչ կարևորություն ունի, երբ ֆիզիկական ուժդ տեղն է և միտքդ կրնալ ուժգնորեն։

— Մարկոս իրավացի է,— զոչեցին ներկաները միաբերան,— դուն ալ կրնաս օր մը դերակատարել քու դորձդ, ըլլալ ատախանովյան և ավելին ալ . . .

Լուսիկին դեմքը հանկարծ պայծառացավ անտես լույսով մը, որ ներսեն կրխեր, կծավալեր։ Ոտքի ելավ, լեցուց բաժակները գինիով։

— Վերցնենք բաժակները կենացը այն կազմակերպության և այն մարդուն, որոնք կարելի ըրին այս բոլոր պատեհությունները մեզի . . .

Հյուրերը կնեղեին Լուսիկի աչքերուն, որոնք դամված էին այդ պահուն պատեն կախված մեծադիր դունավոր նկարի մը, ուր դարերու մեծադույն ուսուցիչն ու առաջնորդը հայրական զորավանքով գրկած էր մինինիկ աղջիկ մը, զոր դժվար էր դանադանել իր բռնած ծաղիկներունեն։

Ամենքը մեկ ոտի ելան շրթունքներուն մատեցված բաժակներով և ի խորոց սրտի արձակեցին փառաբանանքի անկեղծ խոսքը, որ երդի պես քաղցրալուր՝ լեցուց մթնոլորտը։

— Հավիտենական փա՜ռք ու պատի՛վ Անոր . . .

Լուսիկի աչքերուն հետ, Լուսիկի աչքերուն պես, հիմա բոլորին աչքերը սևեռարիք հառած էին նկարին և անոր մարմնացուցած դաղափարին։

Երևան, 1948

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
1. *Մեր Հայաստանն է*	3
2. *Թելհագի Ավազներեն Կիբովականի ծառաստանները*	12
3. *Անցյալն ու ներկան*	20
4. *Կժոլին Վահանիկի այտերն ու փողկապը*	31
5. *Հայրենատենչ երիտասարդը*	45
6. *Հավիտենական փառք ու պատիվ Անոը*	63

Պատ. խմբագիր՝ Աբամ
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Գոնտարով սրբագրիչ՝ Ա. Գոռիճյան

ՎՖ 03639. պատվեր № 1371, տիրաժ՝ 3000.
Հանձնված է արտադրության 20/X 1949 թ.
Ստորագրված է տպագրության 3/V 1949 թ.

Հայպետհրատարակչության 1 տպարան Երևան, 1950, Պուշկինի № 65

ԳԻՆԸ 1Ռ· 50 Կ·